



ԺԱԴ Ա. ՅԱԿՈՒԲԵԱՆ

891.98/

ՄԱՐԴ ՄԸ ՄԵՇԱՀ...

ԱՐՑՈՒԽԻՑ ԵՒ ՔԵՐԹՈՒԱԾ

ՎԱՀԱՆ ԹԵՖԵԱՆԻ

ՄՃՏԱԴԱԼԱՐ ԵՒ ՍԻՐԵԼԻ

ՑԻՑԱՑԱԿԻՆ

A 39640

1946

Գ. Ա. Հ. Ի. Է.

ՑՊԱՐԱՆ «ՆՈՒՊՈ.Բ»



ՍՐԾԻ ԳԻՐ

Վահան Թեքէեան:

Մա՛րդ մը: Խառնուրդ երկրի և երկնքի, հողի և հոգիի, մութի և լոյսի:

Մա՛րդ մը: Երէկ՝ մարդոց մէջ և աշխարհին վրայ: Այսօր, մահուան շնորհիւ, այլեւս ազատագրուած իր մարմնաւոր կեղեւէն. և վերջնապէս ստացած իր խակական բնոյթը, իր հարազատ հոգեկան դիմագիծը, զուտ, ջինջու վերջնական՝ բովէն անցած ոսկիի պէս:

Մա՛րդ մը: Երէկ՝ կեանքի բեմին վրայ իր մասնայատուկ գերով ու դիմակով: Եւ իբրև հայ իրականութեան մէկ անդամը՝ հայ մարդոց մէջ. որոնց մեծագոյն մասին, ան, հեռուէն կամ մօտէն, պատկերացաւ միա՛յն իր ընկերային հանդամանքներով և տիտղոսներով: Ազգային գործիչ, երեսփոխան, ուսուցիչ, գրագէտ, բանաստեղծ, հրապարակիր. խմբագրապետ. կուսակցական առաջնորդ:

Բայց մեզմէ քանինե՞ր միայն թափանցեցին այս մակերեսային հանդերձանքներուն, անոնց ներքե՝ եթէ ո՛չ լիսին՝ գէթ մասամբ ընդնշմարելու համար մա՛րդը ինչպէս որ էր հոգւոյն ընդերքին և գաղանիքին մէջ: Քանինե՞ր միայն զացին այն համր և գաղանի տառապանքը՝ որ այդ մարդուն ողբերգութիւնը եղաւ, որ անոր հոգւոյն հանապազորդ խաչելութիւնը եղաւ...: Քանինե՞ր մօտեցան անոր սիրով, կամ գոնէ համակրանքով, և ջանացին հասկընալ զայն՝ իբրև իրենց մէկ մենաւոր և տառապալից եղբայրը, կամ գոնէ նմանը:

Քանինե՞ր՝ իր ողջութեան։ Եւ սակայն, դառն որքան
ծիծաղելի սովորութեան մը համաձայն, իր մահէն եւթք,
չպակսեցան աշխարհի հայ մարդերը՝ որոնք ահագին ծան-
րութեամբ տիտղոսներ հադցուցին՝ իրրե. ծիրանի՝ իր ան-
հոգի մոխիրին և իր անշունչ դիակին, որպէս թէ ծածկելու
համար մերկութիւն մը կամ աղքատութիւն մը, որ՝ իրա-
կանին՝ գոյութիւն չունի, քանի որ թէքէեան, ինքնին
հարստութիւն մը երէկ՝ իրրե մարդ — նկարագրի իր այ-
գերով և ցայգերով միատեղ, — այսօր, ժամանակին և
մարդոց դիմաց, անմահութեան հովանին ներքեւ, աւելի
եւս անժանգելի և անխոցելի գեղեցկութիւն մըն է ա՛լ
դարձոծ . . .

Որովհեաեւ անոնք, այդ մարդերը, չդիացան թէ իրենց
զգեցուցած տարազները՝ զայն մերկացուցին և որբացուցին
այն պարզ այլ չքեղ ծիրանին՝ որ մարդու իր վառքն էր,
բաւարար իրեն, և զայն նսեմացուցին հոգիի իր գեղեց-
կութենէն, որ պէտք չունէր ո՛չ մէկ զարդարանքի և գո-
վեստի Եւ որովհեաեւ անոնք, այդ մարդերը, իրենց կար-
ճատես աչքերով ու հոգիով չկարողացան տեսնել ու ճանչ-
նալ մարդը որ էր Վահան թէքէեան։ Մա՛րդ մը միայն,
իրենց նման Եւ սակայն մարդու այդ հասարակ պիտակը՝
իրեն ինչքա՞ն բաւարար, որպէսզի առանձինն, անջա՛տ իր
միւս պատկներէն, զինք գեղեցկացնէ և ապրեցնէ իր մա-
հէն ետքն ալ՝ մարդոց մէջ, աշխարհի վրայ, և մոռացու-
մէն անուին . . .

Կասկած չկայ թէ այս ապամահ դոյութեան իր նորաս-
տը պիտի բերէ նաև ու մանաւա՞նդ ժամանակը, որ պիտի
սրբագրէ, և օր մըն ալ ի սպառ ջնջէ այդ մարդոց սխա-
լը, աշնան աերեւներու պէս գալիացնելալ ու ի վերջոյ թօ-
թափերով անոր անունին վրայէն բոլոր աւելորդ գոյները,
մնոտի գափնիները և անցաւոր հանգերձները, վերջնապէս

Է յայտ բերելու համար այս սուտերուն տակ ծածկուած չքեղ ու վճիտ, աննիւթ ու անսնց բիւրեղը, որ է մարդու մը հոգին — Վահան Թէքէեանի հոգին...

Անհատ մը՝ ինքն ըստ ինքեան միութիւն մը, ինքիրմէ գուրս՝ ընկերութեան մէջ՝ այլաղան անձերու բազմութիւն մըն է, քանի որ իր շրջանակէն հեռու կամ մօտ իւրաքանչիւր անձի աշքերուն և մտքին մէջ ան կ'անդրադառնայ մամայատուկ պատկերով մը, իւրաքանչիւր սրտի մէջ կը դրոշմէ ինքնուրոյն տպաւորութիւն մը։ Եւ այս այլաղան անդրադարձներուն համեմատ է որ անհաս մը, իր շուրջի մարդոց մէջ, իրեն համդէպ կը ստեղծէ և կը բուրբոքէ զգայութիւններ, զդացումներ, կարծիքներ, հայեացքներ։

Վահան Թէքէեան բացառութիւն մը պիտի չկազմէր ճանաշումի այս օրէնքին մէջ։ Արդարեւ, աշխարհի հայ մարդերը զայն ճանչցան իր այս կամ այն գէմքով, զոր ան՝ տեղին կամ պահին համեմատ՝ ցոյց տուաւ անսնց, բազմութեան մէջ, իրեւ հայ ընկերութեան մէկ անդամը։ Եւ անսնցմէ իւրաքանչիւրը բնականաբար սրտի և մտքի ի՞ր սեփական տեսանկիւնէն դիտեց ու դատեց զայն՝ ա՛յն չափով որ պատեհութիւնը թոյլատրեց մօտենալ անոր։ Այս ճամբով է որ ումանք անոր մէջ տեսան և արժեւորեցին միա՛յն բանաստեղծը, ուրիշներ՝ միա՛յն կուսակցական աւուաջնորդը, ումանք՝ միա՛յն աղդային գործիչը, ուրիշներ՝ միա՛յն հրապարակագիրը։

Վահան Թէքէեանը, զոր ե՛ս ճանչցայ դիպուածին բարի մեզսակցութեամբ, տարբե՛ր է բոլորովին այն մարդէն՝ որ երկրէ երկիր, բեմերու վրայ, թերթերու մէջ, գրասեղաններու առջեւ, կամայ - ակամայ, դիտակից կամ անդիտակից հպարտութեամբ մը և փառասիրութեամբ մը

պտտցուց մտքի և սրտի իր կարողութիւններն ու արժանիքները՝ բարձրաստիճան զինուորականի մը պէս որ շքանչանները իր վրայ կը կրէ:

Ան ինծի համար եղաւ մա՛րդ մը, տարազին ամենէն պարզ ու ջինջ, և այդ պարզութեամբն ու մաքրութեամբն իսկ ամենէն խոր, շքեղ, սրտառուչ իմաստին մէջ, ամենէն հարուստ և պայծառ յայսնութեան մէջ:

Մա՛րդ մը զոր տեսնելու երջանիկ բախտը ունեցայ, — թէև կարճատեւ, աւա՞զ, — իր մտերմութեան և մենութեան սենեակին մէջ, որուն գաղտնապահ դուռը ան սիրո՞վ բացաւ ինծի, և թոյլ տուաւ որ ներս մտնեմ, նե՛րս իր ծածուկ հոգիին . . . Եւ տեսայ մարդը: Ո՞չ ան որ կ'երեկը արտաքնապէս, այլ ա՞ն որ էր՝ ինք իր հոգիին մէջ — իր գաղաթներով և անձաներով, իր լոյսերով և խաւարներով, իր փափկութիւններով և կիրքերով, իր սէրերով և ատելութիւններով, իր տրախտութիւններով և թախիծներով:

Ես երջանիկ բախտը ունեցայ նաև ըլլալու բարեկամ մը իրեն: Թէև հեռաւոր շառաւիզի մը վլայ ու խոնարհ աստիճանով: Բայց բարեկամ մը. և նոյնի՞սկ աւելի քան բարեկամ մը թերեւս, քանի որ անօրինակ և անուշ դիպւած մը մեզ իրարու կապած էր գաղտնիքի մը խորհրդաւոր թելով . . .

Եւ այսօր, իր մարմնական անհետացումէն ետք, ամէն անգամ որ զայն կ'ոգեկոչեմ իր այս կամ այն խօսքին և ձայնի շեշտին մէջ, դիմագիծի խաղին կամ թեփ շարժումին, նայուածքին կամ քալուածքին մէջ, անկարելի է որ չարցունքոտի հոգիս: Եւ երբեմն, նոյնի՞սկ աչքերս: Ո՞ր մարդկային կամքը կարող է զապել երինառաք անձրեւը . . .

Եւ սակայն սոսկ յիշատակ մը չէ՛ ան ինծի համար: Որովհետեւ միայն մեռեալնե՛րը յիշատակ և փոշի կը դառնան: Մինչդեռ ան, թէեւ մեռած, շնչուն և տրոփուն իրա-

կանութեամբ մը միշտ կ'ապրի այն գաղտնի երկրէն մէջ՝
ուր կը բնակին յիշատակներս, զգացումներս, զգայութիւն-
ներս, տպաւորութիւններս։ իր կենդանութիւնը, այսօր,
միայն միջամվայր փոխած է։

Ներհակաբար, թէեւ կը հաւատամ իր յետ-մահու կեան-
քին, թէեւ կը զգամ իր ողեկան կենդանութիւնը ինձմէ
ներս, և սոկայն անկարելի է ինծի չանդրադառնալ թէ ան՝
իբրեւ հողեղէն արաբած՝ անուրանալիօրէն ենթարկուած է
մահուան օրէնքին։ Եւ այս դաժան իրողութիւնն է մանա-
ւանդ որ ներգործած է մտածումներուս և զգացումներուս
վրայ, ալեկոծած հոգիս, և ծնունդ տուած այս հատորին։
Մարդու մը մահը՝ ի՞րը Անդութ, ցաւատանջ, սրտայոյզ,
Եւ հասարամ՝ ինչպէս մահը ո՛եւէ մարդու, ո՛եւէ ծաղիկի։
Եւ սակայն բաւական ցնցիչ երեւոյթ, որպէսզի մարդկա-
յին ո՛եւէ սիրո՞ դոնէ պահիկ մը՝ քնարանայ արցունքով և
թրթռայ ամենէն զգայուն մարդկայնութեամբ, ամենէն
ներդօր յուզումով, ամենէն թախծոտ խոհերով . . .

Այսուհանդերձ պիտի գտնուին անշուշտ մարդեր, որոնք
Վահան Թէքէեանի մահուան և սուդին նուիրուած այս տը-
խուր տաղերուն գիւմաց պիտի մղուին խորհելու՝ թէ մահուան
այս շատ հասարակ տուամը ինչո՞վ կ'արդարանայ գրտելու։
Վահան Թէքէեանո՞վ։ Եւ պիտի ընդվզին։ Կամ ապշին։
Կամ քմծիծաղին։ Կամ ուս թօթուեն։ Եւ սակայն կայ կեան-
քին մէջ աւելի հոգեցունց գէպը մը՝ քան մահը սիրելիի մը,
բարեկամի մը, կամ առնուազն մարդու մը, ինչքա՞ն ալ
ամենօրեայ երեւոյթ մը ըլլայ ան։ Անոնք, բոպէ մը թո՛ղ
Վահան Թէքէեան անունը փոխարինեն անունովը իրենց ճանչ-
ցած ու սիրած մէկ անձին, որ այսօր ա՛լ հողին բաժինն է
գարձած . . .։ Եւ անկեղծ յուզումով մը թո՛ղ ինքնամփոփ-
փին. . .։ Ոգեկոչման այդ պահէն ետք՝ քաջութիւնը պի-
տի ունենա՞ն դեռ քմծիծաղելու այս տաղաչափուած ար-

ցունքներուն դիմաց, որոնք կու լան մահը ոչ միայն մարդու մը, որոն կշխռ՝ այս պարագային՝ կրկնապատկուած է բանաստեղծի բացառիկ արժեքով մըն ալ, այլ նաեւ մահը մարդուն առ հասարակ»

Ուրիշներ առարկեն թերեւս — և իրաւամբ — որ վահան թէքէանի մահը այնքան ալ յուզիչ և եղակի իրողութիւն մը չէ, երբ նկատի ունենանք բացառապէս բախտաւոր իր ճակատագիրը։ Արդարեւ, երբ բաղդատենք զայն եղերաբախտ կամ նահատակ, վաղամեռ, անփառունակ կամ չքաւար մեր բանաստեղծներուն և գրադէտաներուն հետ, զայն կրնանք ընդունիլ իրեւս մեր ամենէն բարերաստ բանաստեղծներէն մին։ Իր կեանքի ճամբորդութեան ընթացքին՝ ան ճանչցաւ և ըմբոշնեց ապրելու հաճոյքը և ուրախութիւնը, հանրային կարկառուն դէմքի համբաւն ու պատիւը, և բանաստեղծի փառքը. ան ունեցաւ յարաբերաբար երկար գոյութեան մը բախտաւորութիւնը և բարեկեցիկ կենցաղի մը ապահով հանգստաւթիւնը։ Այս՝ եւ այս լուրջը իր արդար իրաւունքն էր։ Բայց և այնպէս, մինչեւ իր վերջին օրերը, իր խորագոյն էտթեան և արիւնին մէջ՝ ան գաղանօրէն կրեց և պատցոց դժբախտ մարդու ամենէն եղերական և տանչագին ողբերգութիւնը, զոր զինք ճանչցող կամ սիրող մարդերէն շատ քիչերը միայն կարողացան հասկնալ, կամ գէթ կուահել...

Ուրիշ կարգի մարդիկ թերեւս այս մատեանը ենթադրեն երախտագիտական զգացումէ մղուած և պայմանաւորուած պարագայական արիտուլը վահուն թէքէեանի թանկ բարեկամութեան։ Թո՛ղ դիտնան անոնք սակայն՝ թէ այն պարտքը զոր կը կրեմ խղճիս վրայ անոր հանդէպ, տարբեր ճամբայով կարելի չէ հատուցանել։ Եթէ ոչ միայն հաւատարիմ, խորոնկ և անխառն սիրոյ մը

տուրքովը՝ իր սիրելի անձին և յիշատակին . . .

Այդօրինակ սիրոյ մը ինքնեկ արտայայտութի՛մն է միայն այս տաղափոնցը, զոր քաղած եմ անձնական ապրումներէ, տպաւորութիւններէ և յիշատակիներէ, և որ թագուն հոգեկան պատմութիւնը կը կազմէ Վահան Թէ՛քէնան մարդուն, այնքա՞ն՝ որքան ան ինքզինք ճանշցուց և բացաւ ինծի, և որքան եռ ճանչցայ զինք։

Ադքա՛տ ու սղզախ'կ թերեւս՝ այս սէրս, բաղդատմամբ իր հարուստ և շքեղ բարեկամութեան՝ որմէ անուշ և մեծ բաժին մը հանեց ինծի, և որ երէկ զիս ըրաւ, և իր յիշատակավ այսօր զիս կ'ընէ հարուստ, հպարտ և երջանիկ։ Եւ սակայն իր նկարագրին երեաներէն, իր քաղաքական գաղափարներէն, իր արուեստագիտական տեսակէտներէն, և նոյնիսկ իր գրական ստեղծագործութիւններէն ոմանց հանդէպ տնեցած տմբողլ վերապահում՝ այդ սիրոյս խորութենէն և ջերմութենէն ոչինչ չի պակսեցներ — ո՛չ իսկ դոյզն շիւղի մը կշիւին չափ . . .

Այնքա՞ն ատեն որ բարախէ կեանքը սրտիս մէջ, պիտի յիշեմ Վահան Թէ՛քէնանը, ու ճշմարիտ երջանկութեամբ և յուզումով պիտի ըսեմ իմ օրերուս աշխարհին և մարդոց՝

— կեանքիս մէջ ես ճանչցայ մա՛րդ մը . . .

Մարտ 1946

ԺԱԳ Ա. ՅԱԿՈԲԵԱՆ

ԱՍՏ

Այսեղ ահա զիրք մը բառե՛ր
Մեր ծիրանի, մեր ձորձ հազած:
Այսեղ տպւ ցա՛ւ ու լա՛ց...

Թառունահար սրի զիւե՛ր,
Սգարարա խոի ամպե՛ր,
Ու ոեւ բնա՛ր հուաչի...

Եւ արցունի սափո՛ր այսեղ՝
Լեցուած աչի ու հոզի
Սղբիւնեւէն սպալի...

Եւ ուռենի առ ուռենի
Ուռուահաս տոլե՛ր ահա՝
Ար սապանի մը վրայ:

Եւսասուացող, արտասուալի
Քերքւածի եւ ծաղիկի
Գիշեկմիր վրայ, փունչ առ փունչ:

Եր հսկումի տիուր մոմե՛ր
Տաղե՛ր վառուած սնարն ի վեր
Շիշած մարդու մը սրտին...

Եւ էջ առ էջ կնդրո՛ւկ ահա,
Եւ ամբողջ գի՛րք մը խնկամնի
Ցուօի մը վրայ սրբագան...

Եւ ե՞ս ահա ամբողջովիխն՝
Սուզէ մեխով, սրով ցրէին
Ու մարմինով ծնկաչով,

Գերեզմանիդ դէմ անցաւոր
Եւ հոգույդ դէմ յաւերժական,
Ո՞վ Մարդ — Վահան Թալիքան...

ՄԱՐԴԸ ՈՐ ՄԵՌԱԻ...

Ա.

Հինգօքքի օ՛ր մ'Ապրիլի,

Ուր այնիան քաղցը է ապրիլն, եւ մեռնիլը՝ այնիան դառն...

Օդը խաղաղ է ինչպէս հանգուցեալի մը հոգին:

Գարունի տունչ եւ շառայլ, կեանքի բերկրանք ամեն դի: Երկնեֆին մէջ գարնային՝

Մանկան մը զինջ խոնճն պէս առաւօտեան արեգակ,

Որ վարդ առ վարդ կը տեղայ

Քաղաքին վրայ ժրազան՝

Ուր երջանիկ եւ դժբախտ մարդեր կու զան եւ կ'երբան,

Ուր կեանքն անհոգ կը քալի՝ դպրոցական զերդ տղայ... .

Յանկարծ ահա՝ բօրի նման՝

Եկեղեցւոյ զանգի մը լացը գումկան,

Բազմաղաղակ եւ բազմամբոխ նամբուն վըրայ քաղինենի...

Յանկարծ ահա՝, աղեսի նման, կեանքին առընթեր,

Եւ քաղցը ու պարզ օրուան մէջտեղ Ապրիլի,

Կ'երեւի կառք մը անսովոր, եւ տարբեր

Առօրեայ միւս կառքերեն

Որ ողջուրիւն ու խինդ ու վարդ կը կրեն.

Առանց ծաղկի եւ զարդի

Սրհագոյն կառք մը երկձի,

Եր խեղնուրեան մէջ՝ հարուստ,

Եր պարզութեան մէջ՝ օֆեղ,

Ինչպէս հոգին այն մարդուն զոր կը կրէ ան ներքուստ...

Երկրին վըրայ, կեանքին մէջին, ու ողջերուն բեւանցիկ,

Կառքի մը պէս ո եւ է՝ մեռելակառք մը կ'անցնի,
Ու կը կրէ՝ առարկայ մ'իբրեւ այլեւս նետուելիք՝
Ա՛լ անօգուտ մնացորդ մը սպառած մարմինի,
Ու դեռ երեկ'կ, երեկ'կ դեռ,
Խօսուն, խոհուն, տնչուն մարդ մ'էր.
Եւ կը կրէ դագաղի
Մը գաղտնիքին մէջ կղպուած մարդ մը ի քուն՝
Երեկ երկրի լոյնին արթո՛ւն...
Մա՛րդ մը — բէեւ ալետարի՛
Բայց որ առտովն էր գարնամեայ երիտասա՛րդ,
Եւ իր սերովլը՝ զեղեցիկ'կ.
Համե՛ս, բայց իր գրչին բերքովը հպա՛ր.
Թէեւ աղբատ, բայց տաղանդովն իր՝ հարո՛ւս,
Մա՛րդ մը որ այժմ իր ետին,
Ակոսներուն մէջ իր գրչին եւ բայլերուն կը բողու
Իբր երիտա՛կ աշխարհին՝
Մրէ ի սիրս եւ օրբուննէ ի օրբունն՝
Իր պարզ անունն եւ պերն հոգին...
Եւ ա՛յս, եւ ա՛յս մարդն է ահա
Զոր աշազուրկ նակատագրին սեւ կառն հիմա,
Վարիչն որուն մա՛հն է անգութ,
Զինց օրուան մէջ ապրիլեան
Ուր երջանիկ եւ դժբախտ մարդեր կու զան եւ կ'երքան,
Ա՛լ կը տանի իր ննջարանը վերջին՝
Հեռու անկիւն մը հողի,
Հեռու երկիր մը մոռացման եւ ձմրան,
Մինչ զանգակի մը հոգին մարդկայնուեն կ'արտասուէ
Այս աշխարհի ափունեն դեռ նո՛ր խարիսխ վերցուցած
Ու նեռացող այս մարդուն անդարձ կեանքին ետեւեն...
Արեւածածկ պողոտային մէջ կենդանի
Ուր կեանքն ուրա՛խ կը խնդայ՝ դպրոցակա՛ն պատանի,

Միայնակ մարդ մը մեռեալ,
Եւ իր ետին՝ Ապրիլի օր ու խնձիղ ու տառայլ,
Եւ իր ետին երիտասարդ ու ալեհեր
Մարդե՛ր, մարդե՛ր ու մարդե՛ր...
Մարդե՛ր... Աւա՛ղ, ձեւե՛ր լոկ մարդկային,
Կեղծ լրջութեամբ մ'օսլայուած՝ օձիներու պէս լաքէ,
Հանդերձուած՝ վէտի համար պատօնական
Եւ բոնազբոս ու վարձուած տրմութեան
Զօր պարտական են կարծես՝ թէ ո՛չ մարդուն՝ գէք մահուան.
Եւ ակամա՛յ յուղարկաւոր՝ ուպարուած
Կարծես սուզով մ'այնքան կեղծ,
Այնքան օփնու, որ անկարով են նոյնիսկ՝
Ապակիի պէս պարապ եւ պաղ աշբին մէջ իրենց
Չեւացնել միակ արցունիք մը գէք սուս,
Որ այդ բափօրը մահուան, որ այդ հանդէսը տիսուր
Գէք արտաքուս զգենուր
Պամին պատօնան մարդկային դոյզն երեւոյք...

Այդ մարդերուն մէջ սակայն՝
Ափ մը հոգի՝ միմիայն,
Բարեկամի հազուագիւս սուրբ անունով միւռոնուած
Միայն քանի՛ մը հոգի՝
Որ կառերու խորն ընկղմած մեկուսի,
Որ ծածկօրեն խեղդուած իրենց ծովուն մէջ ցաւի,
Թաւոկինակի մը բափանցիկ գաղտնապահման ետեւեն,
Մերք մեղմ եւ լուռ՝ ակի պէս,
Մերք հեղեղի պէս՝ բարձրագոչ ու գինով,
Բայց մի՛տես, բայց մի՛տես անսանձելի արշունքով
Կու լան ամբողջ իրենց աշխերն ու հոգին...
Կու լան ամբողջ տառապանին ու տիսուր թիւնն աշխարհին,
Տղոց նման որ կարծես իրենց հայրն են կարուսեր,
Խորհելով քա՛ղցը այն մարդուն

Որ դեռ երե՞կ, երե՞կ դեռ,
Դէմն եր իրենց աշխերուն եւ ձեռքերուն եւ սիրոյն,
Եւ որ հիմա կեանքեն մատած ու նինցած՝
Իբրեւ անպիտ ցնցոտի՝
Պազաղին մէջ կը պառկի
Յաւերժօրէն անզարթօն...

Յուղարկաւոր թափօրէն դուրս սգակիր,
Մայրեն ի վար անցորդնե՞ր, օրուան հացին ի խնդիր,
Եւ անցորդնե՞ր որ կը խորհին խնջոյի մը մօսալուս,
Տրտմատեսիլ դիակառի մ'իսկ դիմաց...
Անոնցմէ մին՝ ապահար
Այս նոր դեպին որ չեր յիշուած, չեր կարդացած
Օրաբերքին մէջ առտուան,
Կանգ կ'առնէ պան մը՝ ոււաղիր,
Եւ հարց կու տայ հետաքրիր — Ծ'ոլ եր ան...
Եւ պատասխանը միակ՝
Հանգուցեալին մէկ պզտիկ բարեկամին նոզիկն՝
— Մա՛րդ մըն է ան...
Եւ կը բալէ իւրաքանչիւրն իր նամբան...

Մահուան խոնի մը նման,
Աւնան ամպի մը նման դանդաղօրէն, տրտօրէն
Մեռելակառ մը կ'անցնի
Առաւօսեան եւ Ապրիլին ընդմէջէն՝
Ուր այնքան բաղցը է ապրիլն, եւ մեռնիլը՝ դառն այնքան,
Ուր երջանիկ եւ դժբախտ մարդեր կու գան եւ կ'երքան,
Մեռելակառ մը կ'անցնի
Պողոսային եւ Ժխորէն բաղաքին,
Ուր արեւոս կեանքը՝ մահուան թեւանցիկ՝
Անփոյր կ'երգի՝, կը կայրէ՝ դպրոցական զերդ աղջիկ,
Եւ կը բալէ երկրին վրայ յաւերժական իր ուղին...

Մարդե՛ր, այստե՛ղ . . . : Ահա՝ փոսի՝ ուր, մահնին վրայ յետնագոյն,
Կացինահար ծառի պէս, անշարժ եւ լուռ եւ տժոյն՝
Կը պառկի մարդ մը ա՛լ խոնջ, փառքն իրեն բա՛րձ ու պատա՛նե...

Մա՛րդ մը — ամբողջ կէս դարու Հայոց հարուս Պատմութիւն
Եւ Գրառուես եւ Հոգի... Մա՛րդ մ'որ Ազգին իր սիրոյն՝
Ըրաւ արխիւն իր՝ մելան, գրիչը՝ մերք զենք, մերք սրինք . . .

Այժմ իրեն հետ կը պառկին վարսուն եւ եօր տարիներ,
Նոյնիքան տարուան ալ երազ, տենչանք եւ յօս, վիօս ու սէր,
Որոնք եղան իր մարմինն ու եռոքիւնը համակ:

A II
39640

Սի՞րս մըն եր ան, որ խնդաց, որ արտասուեց, որ սիրեց.
Եւ որ ատե՛ց խոկ սերով, զի ան մարդոց եր եղբայր.
Եւ իր վարդերն, երզն ու խունին անոնց բաւէխնց հայրաբար . . .

Մարդե՛ր, ծունկի՛ . . . : Հողն ահա՝ եղերածայն կը բափի
Եր դագաղին վլրայ գոց, կոչնակ մը մինչ սգալի
Կը փերքատէ ծաղիկներ եւ արցունեներ հնչական:

Սակայն իցի՛ մոռացման հողն — աւելի՛ ծանր ու սառ.
Քան համայն հողն աօխարին, — չըափեր ձեր սիրտն ի վար՝
Անոր յուօին վլրայ վարդ, յուղարկաւոր ո՛վ ողջեր . . .

Մարդե՛ր, սուգի՛ եւ լացի՛ այս հրածեսին դիմ անվերջ.
Անքաղելի հայ հոգի մը քաղուեցաւ փոսին մէջ . . .
— Ու լոռութի՛ն եւ անգո՛րր, ու լոռութի՛ն եւ անգո՛րր . . .



¶ .

Չորեկաբրի ո՞վ աւօս... Աւօսներուն երկրային՝
Աւօսն յետին ամենեն՝ դեռ աննանանչ եւ անձան,
Զոր վերջին հեղ երկրին վրայ տեսան աշերն ու հոգին
Մարդո՛ւ մը որբ ու հիւանդ, անուամբ՝ Վահան Թէֆեան:

Անօւօս անցեալ եւ զալիք անհունարիւ օրերեն
Կանխորուուած էիր դո՛ւն ժամն ըլլալու չարաղէս՝
Ուր պիտի մահը մտներ ներս, ցայցն ի վար, զաղտնօրէն,
Անոր խուցէն եւ սրտեն, խարսխելու հոն յաւե՛ս...

Դժբախս եւ մութ ո՞վ աւօս, եթէ Աստուած մ'անիրաւ՝
Անոր մահուան գուժաբեր բեզ սուրհանդակը ըրաւ,
Եւ հոդեառ հրետակին՝ անոր տաղին եւ զարնան,

Ան՝ մա՛րդն այդ նոյն, թագադրեց քեզ դափնիովն իր մահուան,
Լուսաւորեց մրութիւնդ իր արեւովն ապաման,
Եւ բովանդակ օրերուն մէջէն ըրաւ բեզ անմա՛ն,

Տասնինն հարիւր քառասուն հինգ Ապրիլ չորսի ո՞վ աւօս...

Դ .

Վերջին, վերջին հանդիպման եղերաբախս հուսկ զիւեր:
Սենեակ մաղքաց եւ անկարգ: Դիրք ու դեղեր դեն ու դես:
Անկողինի մը մէջ տար, առկայծ անթեղ մը ինչպէս՝
Հիւանդ ծեր մարդ մօղասպառ, բայց որ սիջիլ չ'ուզեր դեռ...

Նուրջը՝ սիրող ու սիրուած հինգ մտերմիկ հոգիներ,
Աշխերն որոնց կը ժպտին, բայց որ կու լան ներքնապէս,
Եւ խեղնօրէն են անգէտ՝ թէ մահն անզուք եւ աղուես
Անոր մահնին եւ կեանին սնարին բով և կանգներ,

Թէ հեռուն՝ վայր մը քագուն՝ փոս մը արդեն կը փորուեր...
— Ասուած, ինչպէս չզգացի, չզգացուցիր դուն ինձի
իր մօտալուս արեւմուտն, որ երկրին վրայ աւելի՝

Հասկնայի, սիրէի, սփոփէի մարդն այդ ծեր՝
Աօխարհի մէջ եւ մահուան անհունին դէմ առանձին,
Մարդ մ'որ նոյնիսկ իր վերջին մահինին մէջ՝ տակաւին

Ապրիլ, ապրիլ կը տենչար պարմանի պէս սիրատենչ...

Գիշերն այն պարզ, որ եղաւ վերջին գիշերդ երկրաւոր՝
Ուր գեռ բաց աչքրդ տեսաւ անգամ մը եւս տակաւին
Լոյսն աստղերուն եւ կեանքին, — նամբուդ համար ցալզային՝
«Գիշեր բարի» բեզ չըսի, երբ հեռացայ յուսակոր:

«Գիշեր բարի» բեզ չըսի, մտածելով թէ ես դեռ՝
Ցաջորդ առտու՝ արփաւես եւ նոր օրուան մը համար
Ողջունեի պիտի այգդ բառով մ'որուն դուն յամառ
Քաջն ունեիր եւ որ բեզ կարծես կեանքին կը կապեր...

«Գիշեր բարի» բեզ չըսի, զի գիտեի թէ սրտիդ
Եւ ականջիդ՝ այդ բարբառն եղերօնն կը հնչեր
Անվերադարձ մեկնումի զանգակ մ'իբրեւ բօրաբեր
Որ կ'անշատէր քիշ մ'արիւնդ կեանքի ափեն ծաղկախիս...

Բայց ո՛չ մեկ ցաւ չի՝ խարեր սիրսա այժմ, որ նախ հան անդարձ
Եւ յեղակարձ հեռացումդ՝ շուղեկցեցի որբ նամբուդ
Բաժանումի բառ մ'անուս եւ մաղթանք մը բարեզուք.
— Իմ այգողջոյնն այդ օրուան՝ տարբեր այգի մը մնայ...

Զի կը հաւտամ թէ անօւս հանդերձեալ օր մը՝ որուն
Զիկեր հաւտար երկրին վրայ, բայց ուր հիմա դուն կ'ապրիս,
Պիտի նորեն հանդիպիմ բեզ հեռու տեղ մը մայիս՝
Ուր կ'ապասես ինձ ինչպէս քու երկրաւոր օրերուն:

Յանձնամ, անվերջ գոյութեան մը համար նոր եւ անեղձ,
Պիտի սրտովն իմ ամբողջ տամ բեզի տեկ այն ողջոյնն
Ուր երգեի պիտի նուսկ ցալզիդ յաջորդ այն առտուն՝
Որուն խարտեած ծագն ու կեանքն աչքրդ հազիւ թէ գրկեց...

Զ.

Մարդ մը: Ուզի՞ղ գծի մարդ— երկրաչափի մը հանգոյն—
իր բալուածքով ուղղաձիգ, եւ ուղղամիտ իր գրչով,
եւ ուղղափառ իր գործով, եւ իր խոնով ուղղանկիւն:

Տիւի նման ամառուան եւ ջուրի պէս լիային,
Թափանցիկ, պարզ ու պայծառ՝ իր խօսքն ու գի՞րը խաղաղ,
Ուր միտքն՝ երազ, աչքն ալ՝ մէգ պիտի հազիւ գտնեին...

Հասա՞կ մը պերն որ թէեւ հողին վըրայ կը կանգներ,
Բայց կը հասներ աստղերուն. եւ որուն ուրիշն երկրին վրայ՝
Ծիրանիի մ'արմենի կարծես անծիր բղանցին եր...

Տառապանքի մարմարին մէջ բանդակուած դէմք մը խոռվ,
Ճակատը բա՛ց՝ համարձակ Գաղափարի մը նման,
Եւ միաշուի՛— բայց երկո՛ւ աչքի ուժով եւ լոյսով...

Սի՞րս մը սղու վիպային, բայց մի՛շ հլու զերունին
Մտքի արու օրենքին, եւ որ թէեւ համակ սէր՝
Սակայն գիտե՛ր ու կրնա՛ր լեցուիլ բոյնովն ալ հեռին:

Մի՞սէ մը լուսեղ եւ ուժեղ՝ ձևմարտութեա՛ն ի խնդիր.
Նախ՝ դատաւոր ինք իր դէմ, յետոյ՝ մարդոց նենգ ու կցիր,
Եւ Գեղեցկի հնախոյզ՝ հանենքու մէջ հոգիի...

Գրի՛չ մ'որ եղաւ իր եսին բարգմանն անկեղծ եւ յստակ,
Եղաւ վիճի տրտում լար ու մերք սրինգ սիրերգակ,
Եղաւ մտրակ եւ փամփուշ՝ Զարիքին դէմ եւ Սուտին:

Դո՛րծ մ'որ սրտի հիմերու վրայ կանգնած տէնք մ'է մտի,
Կորողի պէս՝ սիգապանձ, եւ բարիքի պէս՝ վսեմ.
Յորենարտի մը նման՝ Դո՛րծ մը դալար եւ յուռքի...

Հովի նման՝ ծագէ ծագ Կեա՛նք մ'ալեկոծ ու ցանցիր,
Ընտանիքի ակուքէն եւ պարտէզէն տարագիր,
Եւ հողմավար Տերեւի ձակատագի՛ր մ'անկայան...

Հաւա՛սէ մը՝ նիշդ կամ սխալ, բայց բնա՛ւ սուս, բնա՛ւ կեղծ,
Որուն ակէ՛ն միմիայն զիրն ու խօսքն իր բխեցան,
Որուն համար ապրեցաւ ու կոռուցաւ սիրայեղց:

Մա՛րդ մը աղբատ, որ ի օան ո՛չ զանձերու երկրային,
Եւ ո՛չ նոյնիսկ երկնաւոր հարստութեանց անկորուս,
Բոպէ մը իսկ չծախեց ո՛չ իր գրիչն, ո՛չ հոգին...

Օ՛, մարդ մը հա՛յ մանաւանդ՝ միտքն ու հոգին պատարա՛գ
Հայու զիրին ու խաչին եւ դրօսին ու արեան...
— Ահա՛ երկրի սրտին մէջ, անցքին ետեւ, ծագէ ծագ,

Թողած ժառա՛նգն այն մարդուն՝ որ եր Վահան Թէկէեան...

Է .

Բերնին՝ քաղցրոյթն անունիդ, լացն՝ աչքերուն եւ հոգւոյն,
Վերջին օրերդ կը յիշէ սա բարեկամդ փոքրանուն:
Քու մահամերձ օրերուն յութն իսկ արդ զայն կ'սփոփէ,

Զի այն ատեն դուն երկրին վըրայ կայի՛ր տակաւին,
Թէեւ փոյք չէ քէ ինչպէս կրակ մը մօսն իր մախրին
Կամ դղեակ մ'ա՛լ կիսաբանդ . . . : Եւ կը յիշէ՛ սգաբեկ.—

Օրուան լոյսէն եսք յետին, գիշերուան հետ, լուռն ի վար,
Ներս կը մտներ սենեակիդ ձմեռնապատ եւ օսար,
Եւ կը նստեր մահնիդ բով՝ հիւանդապան մը ինչպէս:

Երկու սիրտե՛ր դէմ դիմաց. դո՛ւն՝ մայրամո՛ւս ալ վերջին,
Ա՛ն, նորաբոյս արեւծագ՝ դեւ գարունքի մը սեմին,
Որուն ի տես՝ կ'ափսոսա՛ր սիրտըդ օրերն իր գարուն . . .

Ցաւիդ պահուն իսկ խոժոռ, անոր ծագին դուն ի տես՝
Դէմքրդ ժայռավ կը փայլէր. եւ իր անունը կարծես
Բերնիդ այրող երածին կը բերէր հով ու զինի . . .

Ան կը նստեր ցայգիդ բով՝ ինչպէս զերի մը հլու,
Պատրա՛ս ամէն երկվայրկեան հեզ խաղալիկն ըլլալու
Անգութ այլ ե՛ւ սիրելի հմայքներուդ հիւանդի:

Գոյութենէն անոր փոքր դուն ապահո՛վ ալ կարծես
Որ չէ՛ր կրնար մահն երբեք նակատագրէդ մտնել ներս,
Հետիւ աչքերդ խոնջ ու ծեր կը յանձնէիր դուն բունին,

Մինչ ինք կ'ըլլար ակնապիւ գիւերալամբ հսկումի՝
Մահանման նինջիդ վրայ. աղօրելո՞վ զողունի
Որ ան չըլլա՞ր աներազ, անզարը հուսկ նինջն երկրին վրայ...

Կը դիտեր դեմքդ ա'լ թրուած ժանե բացախէն դառնուրեան,
Ա'լ բանդուած՝ աւելի մարդոցմէն չար ու դաժան
Քան այն ախտեն որ՝ որդի պէս՝ խեղն բռիերդ կ'ուտեր:

Եւ կ'ունկնդրէր մէն մի ունչդ կամ հեւէդ ամէն երկվայրկեան՝
Գաղտնի վախո՞վն որ կրնար գուցէ՝ վերջինն ըլլալ ան...
Յանկարծ հազի ուռումբ մ'ահա բերնիդ մէջ բա՛մբ կը պայրէր,

Եւ կը ցնցէր, կը ֆեծէր հիմ կուրծքդ ամբողջ՝ որուն տակ
Թուերուդ տէնքը կարծես ա'լ կը փլէր յարկ առ յարկ,
Մինչ դեմք՝ ցաւի կացինին տակ կը փշէր զիծ առ զիծ...

Ա'լ օդամայ բռիերուդ ողջ եռքեամբը ծարաւ՝
Կը տնչիր ոունգ առ ոունգ լայն սենեակին ողն անբաւ,
Որ չէ՞ր մտներ կեանիկդ ներս, որ նեղ կուրծքիդ ժի՞չ կու զար,

Մինչ նակտիդ վրայ՝ ձաղկուա'ծ տարիներու մտրակէն,
Ցաւըդ ժիրտի շարաւներ կը բողբոջէր ուղիսուէն
Զոր բարեկամդ կը սրբէր գուրզուրանեովն իր ձեռքին...

Օ՛ չարչառանեդ՝ երկրաւոր տնչառուրեան մը համար...
Օ՛ տառապանեն ալ տղուն որ՝ այդ պահուն՝ կը ցանկար
Ըլլալ մեռա'ծ բան տեսնել իու առկայծումդ տանջագին.

Եւ որ կ'ըներ իր հոգին բաժա՞կ բադուն արցունքի
Ու աղօքի ու խունկի մինչեւ տապիդ կատաղի
Մորիկն այլեւս խաղաղէ՛ր, խաղաղէ՛ր ծովն իրանիդ...

Այդքա՞ն սիրոյ դուն ի տես, օ՛, կ'ուզէիր դուն կարծես
Անոր հոգի՞ն համբուրել. բայց կեղծ հազի մը տակ հեղ
Կը ծածկէիր հոգեբուխ ճիշ մը օփկնոս գորովի...

Օ՛ դուն եւ ան իրարու սիրանաներ անսովոր...
Խնչպէս երգել կ'ուզէիր աղապատանքը անօր.
Բայց լոկ աղե՛րս մ'արցունքոս որ չքողո՛ւ եեղ մինակ:

Ի պատախան իր սփոփն հայցող ձեռքիդ խարխափին.
Ան կը բռներ ձեռքբը որբ եւ անզաւակ եւ ցրտին,
Ու կը գգուէ՛ր, կը սեղմէ՛ր իր գորովով բովանդակ

Իբրեւ քէ կեանին իր ուզէր՝ իր մատներուն մէջէն քել՝
Դատարկուող, նահանջող երակներուդ ներարկել,
Եւ քու ձմեռդ ու գիւերդ տայցընել իր արեւով...

Յայնժամ, բոպէ մը միայն, ժպտուն դեմքիդ անդորրէն.
Ուր անդրաւոր երկնին տնորհն իջած եր արդէն,
Ան, բարեկամդ անանուն, լացն աշխերուն՝ կ'ընդզգար

Երջանիկուրիւնն եւ սփոփն իր գոյութեամբն աննեան
Քեզ ընծայած ըլլալու անոււ պատրանին հայրացման
Մը իրական — քէեւ ո՛ւ, կէս-գիւերուան մը չափ ո՛ւ...

Քեզ պէս մասամբ անցաւոր, մասամբ անանց գոյքերէդ՝
Ու մարդերէն աւելի եղան կեանքիդ սիրաւէս
Բարեկամներն ընտանի, եւ մարդերէն աւելի
Հիմա ժեզմէ մնացին որբ, սգաւոր եւ այրի.

Քու մատներուդ եւ շունչիդ յութովն օծուն ինչերէդ՝
Ու պիտի միւս կենդանի մնան նոյնիսկ երբէդ ետք,
Ունենայի իբր ժառանգ լոկ ժամացոյցըդ խոնարհ՝
Ու տակաւին ողջ սրտիդ ուրախ պատրանքն ինձի տար:

Պիտի պատրանքն ինձ տար ան — բայց կեանքին չափ իրական, —
Թէ դեռ կ'ապրիս, կը տնչե՛ս եւ կը շարժի՛ս երկրին վրան.
Մարդոց պէս ողջ եւ առողջ. քէ օրերուս համբայէն.
Քայլիս կողին կը բալե՛ս կենդանութեամբդ ամբողջ տէն.

Թէ ժամացոյցը սրտիդ կեանքին աշխոյժ նուազով
Կը բաբախէ՛ տակաւին իմ սրտիս հետ, սրտիս բով,
Եւ քէ լեզուովը անոր տրոփներուն բրբուն.
Դեռ կը խօսի՛ս ինձ ինչպէս մեր մտերմիկ օրերուն...

Մահկանացու քէ անման բոլո՞ր, բոլո՞ր ինչերէդ՝
Սրտի նման ժամացոյցդ ունենայի միայն գեր
Ու յիտէի ժեզ ցման ամե՛ն, ամե՛ն երկվայրինան,
Եւ ս սրինե՛ր լսէի ներկայութիւնդ անվախնան:

Պիտի կեանքիս լուռն երգո՞վ ան լնուր տիւ ու զիւեր,
Եւ ժամերուս ճամբուն մէջ ինձ ուղեկցէր իբր ընկեր.
Լոկ ա՛յն ատեն իսկապէս պիտի բնդ միւս լուէր ան՝
Երբ ի՛մ ալ սիրտը դադրէր տրոփնելէ երկրին վրան...

Այս ձեռքերովս — զգուանքի եւ գորովի գաւաքնե՛ր —
Ո՞վ բարեկամ, դագաղիդ կամ օիրմիդ վրայ սիրելի՝
Չըափեցի աննշան ո՛չ խսկ հատիկ մ'աւազի
Այն մուք հողէն որ ժեզ ա՛լ աշխերուս դեմ կը փակեր;

Զի այն պահուն՝ ուր դագաղդ մակոյկի պէս կ'ընկղմէր
Դերեզմանի ծովուն մէջ, ալիբներուն տակ հողի,
Եւ կ'աննետէր ժիշ առ ժիշ հրաժեսի ցայզալի
Հորիզոնին ետեւ խոր՝ զերդ իրիկուն մը ա՛լ ծեր,

Ինձ բուեցա՛ւ սոսկումով՝ որ այդ բաժակ մը ափէս
Սրձակուելիք հողը սեւ պիտի կախուե՛ր մեր միջեւ
Վարագոյրի մը պէս խիս, ինձմէ յաւետ բաժնե՛ր ժեզ.

Ու ձեռքերովս այս սիրոյ՝ պիտի վախճանն իմ մինչեւ
Քեզ քաղէի մոռացման բանձր հողին տակ՝ հոգւոյս մէջ,
Ուր արդ կ'ապրիս յուշերու զերիքական կեանքով պերն...

Մարդոց մէջ՝ դուն՝ անծնողք, անընտանիք, անժառանգ,
Մահուանդ ետեւ չունեցա՛ր արիւնակից սզակիր,
Եւ մահուանդ վիւսը մնաց որբ ու մոլար ու դրանկ՝
Զի ո՛չ մէկ գիրկ չբացաւ տունն իր՝ կեանքիդ տարագիր...

Բայց ես՝ օսար մը անոր, կը բանամ սիրտն իմ համակ,
Հարազատ նայր մը իբրեւ՝ խեղն տունես ներս կ'առնեմ զայն.
Եղբայրուն կը սիրեմ սիրատոփ կուրծիս վրան,
Եւ զաւկի պէս կը գգուեմ ու կ'սփոփեմ այդ ու ցայզ:

Բայց ես՝ ողջի օրերուդ մէկ բարեկամն աննեան,
Արդ, մահեկ եսք, ֆեզ կ'ըլլամ թէ՛ բնտանիք, թէ՛ ծնողք,
Եւ բու սուզով կը լնում տունըս մորմոն առ մորմոն,
Եւ իմ հոգիս՝ խունկ առ խունկ յիշատակովդ սիրական:

Թոյլ ու մատղած ուսերուս եւ մոխրազզես իմ հոգւոյն՝
Երկրին վրայ առանձին եւ լիովին կը կրեմ
Վիւսիդ դազաղն որ մե՛ծ է ու ծանր, եւ խոր ու դժխեմ,
Թէ՛ ծնողքի, թէ՛ եղբօր, թէ՛ զաւկի վիւս մ'ըլլալուն...

ԺԱ.

Մա՛րդ, հովկ հովկ, փոսիի պէս ցիրուցան կեանեղ ի վեր՝
Պըրսցուցիր ամէն տեղ քեզի հետ ցուայ մ'ամուրի
Ու չունեցաւ ուղեկից ո՛չ խսկ մէկ քայլ կանացի,
Կամ զաւկի ո՛չ մէկ հասակ՝ որուն օռէին ան հանգչեր...

Թէեւ դրանկ՝ հովկի պէս, բայց Դպրութիւնն ըրիր տուն
Ուր Դիրքն եղաւ քեզի եոյր ու լամբ, եւ հաւց ու զինի.
Թէեւ անհարս՝ բայց եղար դուն հա՛յր մտի եւ գրչի
Զաւակներու բազմարիւ, երկրի բոլոր ծագերուն:

Եւ անունիդ ու արեանդ Ազգն ընտանի՛քրդ ըրիր
Որուն վիշտով ու խինդով լոկ ապրեցար՝ անոր հետ.
Որուն փառքին ի խնդիր՝ դուն քաղեցիր հոգիեղ
Եւ գրիչեղ դափնիներ ու նուազներ երկնալիր...

Եւ չունեցա՛ր երէ դուն մայր մը կամ հարս մ'սպիտակ,
Կամ ժառանգորդ մ'որ սպար արեւի մանրդ անհուն,
Ունեցար Ա՛զգդ որ, — արեանդ եւ տաղանդիդ ձօներուն
Ուս այլ արդա՛ր հատուցում, — իբրեւ ծնողք ու զաւակ՝

Լայտ օենդ գրչիդ մահն ու դադարումը սրտիդ...

Ի սեր վերջին հանգիստիդ հողի անմատ մահեին վրայ՝
Ոչի՞նչ, ոչի՞նչ չուզեցիր դուն մարդոցմին նենգամիս.
Չուզեցի՛ր իսկ որ անսի՛ յուզարկաւոր ակամայ՝
Դիմակաւոր արցունքով հետեւին հուսկ ստուերիդ:

Կամ չուզեցի՛ր որ խունկով ու խօսերով խաբեբայ՝
Քու ունեցած, չունեցա՛ծ իսկ արձեներդ բուրվառեն,
Եւ պարտական կեղծ գուրի մը շարժումով՝ դիմայ՝
Ծաղկեփունջեր դնելու արուեստակեալ ձեւն ընեն...

Եւ չուզեցիր որ նոյնի՛սկ սիրմիդ սեմին՝ ձեր վերջին
Հանդիպումն ալ կեղծիմի անգուք հանդէս մը ըլլար,
Եւ մարդիկ նեղ մ'եւս գործեն սուզի մեղքը քուառ,

Որ գեր այդտե՛ղ չտանջուեր շա՛տ տանջուած քու հողին...
Եւ կեանեդ ի բուն եեզ տանջող նոյն մարդերեն նենգաւոր
Իբրեւ հուսկ կամք խնդրեցիր լո՛կ մենութիւն եւ անդորր՝
Վերջին բունիդ համար մուլք յետ յանձնագոյն...

Մահուան օռւին արդ կը պառկիս հողազգեաց...

Ա'լ կը հանգչիս ծառի մը տակ մէսօրէն՝

Մտակ մ'ինչպէս խո՛նջ ալ օրէն եւ լոյսէն,

Նաւ մը ինչպէս նաւակալիքին խարսխած:

Եւ կ'անրշե՛ս այդ երջանիկ ծառին տակ

Որ հովանաւն իր տարածած բունիդ վրայ՝

Հոգիդ ի վար հով ու զովոյթ կը տելայ,

Եւ կ'օրօրէ դագաղդ հետա՞նի առ հետա՞նի...

Մարդոց գաղտնի լեզուով մը լուռ՝ այլ խօսուն,

Հիմա նորէն դուն կը խօսիս երբեմնի

Բարեկամիդ'(*) որուն կու տամ երանի՛,

Ծառի մը տակ՝ կը նախանձի՛մ ես որուն...

Զի կ'ուզէի ես ըլլալ ծառն այդ բարի,

Որ օրն ի բուն, անխոնջ, ամառ ու ձմեռ,

Ես գգուէի նակատըդ որբ, սիրտըդ ծեր,

Ելբօր մը պէս, սփոփի պէս եւ սիւէի...

Եւ կ'ուզէի մնալ ընկեր միւս ժեզի,

Ու գարուննովս՝ այդ ծառին պէս լուսառաւ.

Պննել օիրմիդ ամայուբիւնը դժբախի՛,

Ինչպէս անլոյս բու օրերուն ծերունի...

(*) Ակնարկուբիւն՝ Երաւանդ Օսեանի

ՃԴ.

Հոգիդ՝ կռունկ մը տարագիր եւ անբոյն՝
Թափառեցա՛ւ տարուէ տարի, ծովէ ծով...
Թափառեցա՛ր, մինչեւ ռոպէդ ծայրագոյն՝
Ծարաւելո՛վ, որոնելո՛վ, յուսալո՛վ

Սիրող կնոշ մը զերմուրիւնն ընտանի՝
Ուրգտենէիր անեացում մը անձիր,
Ու վարդ հասակն եւ բաղցրութիւնն որդիի
Մ'որուն դէմքին վըրայ յաւե՛րծդ տեսնէիր...

Եւ երդիմի մը ովասիսը կապոյս
Ուր, տաք օրուան նանապարհեն՝ խոնջ եւ խանձ,
Պիտի գայիիր լուալու տենդը հոգւոյդ,
Վայելելու ընտանեբոյր զուր եւ հաց:

Բայց դեռ տենչդ՝ ափ, բափառումդ՝ կայք չգտած,
Քեզ ողողե՛ց, խեղդե՛ց մանուան ծովն հուժկու,
Մինչ հոգիիդ նայուածնն ետին միւս մնաց՝
Տան մը բոյնի՛ն, որ բա՛ւ եր քեզ ընելու

Երջանկագոյն էակն երկրին եւ երկնին...

ԿԻՐԱԿՄՈՒՏՔ

ՃԵ.

Դուն մեկնեցար յանկարծ այգեղ այն ժամուն՝

Սրտերն երբ մեր դեռ նո՞ր էին սկսեր

Հնչել սիրոյ գորովաձայն զանգը նոյն

Եւ հասկնալ զիրար ինչպէս զոյգ մ'ընկեր:

Երբ նո՞ր էի գտեր ոսկին հաներուն

Պու խօսքերուդ եւ նայուածքիդ սիրաջեր,

Մինչ կ'զգայիր դեռ նո՞ր՝ վարդերն իմ սիրոյն

Զոր խունկի պէս կը խնկէի անձդ ի վեր...

Աւաղ, ուս ցայգ եր հանդիպման օրը մեր...

Դեռ սատ, դեռ սատ ունեի խօսք ու վարդեր,

Զոր բանալու ես սփկնեցայ կուսօրէն:

Բայց կը հաւսամ որ ցած ուսիս ետեւեն՝

Զանոնիք հիմա դուն կը օնչես, կը կարդաս,

Եւ կը տեսնես նոզիս բուղբին վրայ այս ...

Պիսի ըլլա՛ն անտուս մարդեր երկրին վըրայ,
Առոնիք այստեղ կարդալով սեր մը անսովոր,
Զըմբոնին զայն, եւ զարմանան խելացնոր.

Թէ ես ի՞նչպէս կը սիրեմ ժեզ այսպէ՞ս, այսքա՛ն,
Քեզ՝ որ ժիշե՛ր, մօս ու հեռի, չար ու բարի,
Քիշե՛ր լոկ ժիշ մը սիրեցին եւ հասկցան:

Եւ հարցնեն պիտի թէ սերս ի՞նչ հրաւեխով,
Անձիդ գաղտնի ո՞ր աղբիւրեն առաւ հոգի՝
Շեցնելու գրի մ'ամբաղջ դաշն անջրդի . . .

Թէ
Եւ թէ ի՞նչպէս, եւ ուրկե՞ս գտայ իմ մէջ
Արդիական այսչափ հառաչ եւ արցունիւն
Առուակի պէս եղերգելու վիշերս անտէզ:

Բայց չգիտցա՛ն անոնիք՝ ընկեր կամ քենամի.
— Մարդ մ'էիր դուն, ու մարդ մ'եմ ես. եւ ժեզ չողբալ
Զէի՛ կրնար, ժե՛զ որ մասամբ ալ ե՛ս եի . . .

ԺԷ.

Ո՞վ մարդ, ընդ միւս փակելէ առաջ աշխերդ լուսաբաղձ՝
Քունին համար անվախնան զոր մարդիկ մահ կր կոչեն,
Ո՞վ գիտէ ի՞նչ հոգիով ու հայուածքով զանանդած

Յանկարծ տեսար մահի որ քե՛զ կու գար մըին անհունեն...

Մըսի, մտքի եւ մարմնի ի՞նչ արթուրեամբ այգային
Հանդիպեցար դուն մահուան մուրին, ցուրտին, խորհուրդին...

Եւ արդեօֆ ի՞նչ հայցումով, մենուրեանդ մէջ, որբի պէս,
Փըսուեցիր ձեռք մը հաստա որով կեանքի՞ն կառչեիր,
Եւ մուրացիր բռք մը օդ որ քեզ տար տո՛ւնչ գարնալիր...

Օ՛, անկասկած ա՛յն պահուն լոկ մահացար խսկապէս՝
Նրբ ա՛լ մեռնիլդ զգացիր, զիսցար՝ լոյսի պէս պայծառ
Գիտակյուրեամբ մ'որ քերեւս կեանքիդ իսկ մէջ չունեցար...

Ճ Ը.

Թէեւ ա'լ չես պատկանիր լոյս աշխարհին աշխերուս
(Զի մուրք հողին ընդերկրեայ յաւերժական հիւրն ես ալ),
Եւ ձայնս, աւա՛ղ, չի՛ կրնար հասնիլ սրտիդ խորասոյզ,
Եւ ձեռքերուդ կենդանի սեղմումը ձեռքն իմ զզալ .

Սակայն ինծի կը բուի թէ երբ հիմա ներս մտնեմ
Գիրի, խոնի, երկնումի բու սենեսկէն երբեսնի,
Ինչպէս երե՛կ գեռ՝ կրկին պիտի գտնեմ բեզ իմ դէմ.
Առջեւը նո՛յն սեղանին, ձեռքիդ՝ գրիչդ ընտանի .

Պիտի սեղմես ձեռխս՝ ինչպէս միր տարժումիդ օրերուն,
Եւ ինչպէս ողջ բու ձայնիդ գարնան՝ ինծի խօսիս դուն,
Եւ ինձ ժայտիս նո՛յն սիրովդ ու ժպիտովդ երեկուան...

Յետոյ, երե՛կ իբր ըլլար, քաղաքն ի վար, մայրէ մայր,
Քալենք ալնպէս մտերմիկ որ անցորդները համայն
Պիտի կարծեն մեզ իրօք հայր ու զաւակ հարազատ...

Մարդերը հայ—բարեկամ քէ մանաւա՛նդ թշնամի—

Կեանքի բեմեն անկումեղ վերջ սգացին միաձայն՝

Հայու քնարդ բազմալար որ փօրեցա՛ւ յաւիտեան,

Հոգիդ զոր միտե բաշխեցիր տողերու մէջ զերդ զինի... .

Ո՞չ, չե՛մ ողբար ես զանոնք,— քեեւ կորո՛ւստ ողբալի,—

Այլ մարդն ուկրէ եւ միսէ եւ արիւնէ սոսկական,

Այլ մարդն որ դո՛ւն էիր, դո՛ւն՝ մեծ մասով մուր եւ միա՛յն

Անկիւն մը լոյս, բայց ինձ բաւ որ ժեզ ընդմիտ սիրէի.

Կու լամ ձեռքերդ որ ինձի բացուող բարի՛ք էին հօր,

Կուրծէդ որ երեկ կը տնչէ՛ր, եւ որ անըո՞ւնչ է այսօր,

Եւ նետ կրա՛կն աշերուդ՝ որ մարած են վերջնապէս...

Կու լամ հասակդ բարձր ու վէս՝ որ հիմա կե՛ր է որդի,

Երբներդ՝ որ ինձ եղբօր պէս կը խօսէի՛ն ժպտալի,

Եւ որ այժմ ա՛լ բարացած, ա՛լ լոած են ժիրմի պէս... .

Մտածելով քու վըրադ՝ կու լամ առուն առ առուն,
Մտածելով թէ հիմա՝ ո՞վ զիտէ ո՛ր ոլորտին
Յաւերժանուր դժոխին խոցումներուն, բոցերուն՝
ինչպէս, ինչքան կը կոծէ, կ'այրի մարդու քու հոգին.

Հոգիդ՝ զոր Միտքը ծածկեց ամպով մո՛ւթ Կասկածին
Ու արգիլեց որ տեսնէ Հաւատքին աստին անդրագոյն,
Եւ որ ցանկաց բարձրանալ մերք Տեսլիքին երկնային՝
Սակայն կառչա՞ծ միտս մնաց լոկ երկրաւոր բաներուն... .

Եւ ո՞վ զիտէ այժմ ինչպէս դուն օգնութիւն կը հայցես,
Եւ կը մուրաս օփք մը ջուր որ մարեր ցաւդ հրակեզ,
Զեռք մը օյանեմ, օուրք մը բա՛ռ որ հոգիդի տային հով...

Բայց չե՛մ լսեր քեզ, աւա՛ղ... : Եւ անձրեւի պէս ձմրան՝
Կը հեղեղեմ արցունեներ, ո՞հ, յուսալո՞վ, մաղթելո՞վ
Որ գեր անո՞նք կարենան մասամբ տիշիլ դիւական

Բոցերն անտէջ՝ ուր յաւե՛ս պիտի այրի խեղն հոգիդ... .

ԻԱ.

Զիաւտացի՛ր Երկնին եւ իր անանց կապոյտն

Անդին յաւէտ բնակող աներեւոյք բայց ներկայ

Խորհուրդներուն, եւ հոգւոյն, եւ զոյուրեան ապաման

Որ սրտիդ դէմ մնացին մօֆի ցնորդ վիպեղեն...

Բայց Երկնին մէջ եւ Երկրին՝ Աստուած փնտութիւնը արդէն

Եղաւ բերրի ապացոյցն, որ կ'ուզէիր անդրԵրկնեայ

Այդ սուտերո՛ւն իսկ հաւտալ — ո՛չ հաւատենով մ'առօրեայ,

Այլ իմաստուն եւ առողջ գիտակցութեամբդ համօրէն:

Ներքին հողիդ մէջ երաւս այլ ծլումի միտս առակ,

Կը կրկիր անհօմար բայց միտս գոյ հունտն հաւատէին՝

Որուն սակայն կը պակսէ՛ր յուռքի անձրեւն Երկնային...

Եւ գիտունի պէս յամառ, ճամբուդ վըրայ, կուրծիդ տակ,

Աստուածն անդո՛ւլ փնտուցիր՝ այդ Պարտիզապա՛նն Երկնաւոր,

Իմէ արեւ հայցելու, հայցելու ցող եւ տնորի

Որ ծլէ՛ր սերմդ, եւ պտղէ՛ր, եւ ալ ըո՛ւբ տար խոնջ հագւոյդ...

Ի՞՛Բ .

Եիրմիդ իբրեւ արդուզարդ՝ դուն չուզեցի՛ր ծաղիկներ,
Լա՛ւ գիտնալով թէ անոնք՝ անկեղծութի՛ւն , զե՛ղ ու սէ՛ր,
Մաւրդոց ձեռքին մէջ տողոմ դարձած կեղծիք եւ մոխիր՝
Պիտի վլրադ բափեին արցունեով նենգ ու նանիր . . .

Զի ունենա՛լ եր փափաբդ վարդե՛ր— սրտի պէս՝ կարմի՛ր,
Բարեկամի պէս՝ անկե՛զծ . . . Նաեւ փափա՛նդ եր արբշիր՝
Գիտնա՛լ— զէք հուսկ վայրկեանիդ— թէ ո՛վ՝ ցերեկ ու զիօեր՝
Սրտին ամբողջ խորանով ժեզ համար սէ՛ր կը խնկեր . . .

Ու եղաւ կի՛ն մը միակ , որ երբիդ դեմ յաւիտեան՝
Սէրն իր ծածուկ սանձելու ա՛լ անկարող , հուսկ պահուն,
Դագաղիդ մէջ անձաղիկ՝ իբրեւ համբոյրն իր հոգւոյն

Նետեց կարմիր վարդ մը պարզ , զոր նուիրմամբ մը սրբին
Կարծես փրցուց իր սրտեն . . . Ուզածրդ ա՛յդ եր միայն—
Զինց հոգիի մը սիրոյ լուման միակ ու վերջին ,

Ուուն՝ մինչեւ հուսկ զիօերդ՝ կ'սպասէի՛ր կեանեդ ի բուն . . .

Երբ փակուեցա՛ր դուն աշխերէն մեր ողջի, այս այժմը չկ'ո՞ւ
եւ փեսալի պէս մենացա՛ր վարդին հետ՝ առ քու վծրձանալա՛
Զոր կին մ'իբրեւ սիրտն իր նետե՛ր եր ժեզի, ու ուղանդը նոր
Ո՞վ գիտէ ի'նչ զուզուրանեով տարփաւէն յամախայլ

Զայն գրկեցիր կուրծքիդ վրայ ամուրի՝ այս այժմը չկ'ո՞ւ
իբրեւ հարսի մը կուրծքը կոյս, կո՛ւրծքը գեր, այս նույսալի առ
Որուն միւս տենչն այրե՛ց մարմինդ ծարաւի, ամիսի չորս բառով
Բայց որ ժեզ միւս զլացուեցա՛ւ շար բախտէդ... որ ծառասիւծ ունի

Օ՛, կանացի անոր բոյրէն՝ մուք դագաղդ թար այժմը չկ'ո՞ւ
թանկարծ դարձաւ առազասի հետ դրախտ, այս այժմը թարձաւ
Եւ մահդ՝ անմահ մեղրալուսնի լոյս պտոյս...

Եւ ժնացա՛ր, կնոջ մը սիրտը՝ հոգւոյդ,
Ունենալով վերջապէս ա՛յն՝ որուն վառ
Դուն կարօտովն ապրեցար միւս ու մեռար...

՚Դ.

Ի՞նչ ընէիր սին ծաղիկներ տիրմիդ վլրան՝
Բանասեղձի երբ քու օնորհով ու հոգիով
Դուն կրնայիր քեզ ծածկող հողն ամայ ու սով
Այլափոխել ծաղկասանի յաւերժական։

Ի՞նչ ընէիր նաեւ խունկեր ռոպեական
Զոր վառէին մարդիկ իրենց պիլծ ձեռներով՝
Սիրտը երբոր խնկաման մ'եր մօսախոռով
Ուր չծխուած դեռ յոյզ եւ խոհ կային այնքան... .

Ի՞նչ ընէիր դուն մանաւանդ ունայն մարդոց
Խօսքերն ունայն՝ թմբուկի ձա՛յն, օձի սուլո՛ց,
Երբ գիտէիր — աչքերդ՝ լոյսին դեռ ողջ, դեռ բաց, —

Թէ մերք տղեկ մը պիտի գար քեզ այցելու,
Նիրմիդ վլրայ եւ տաղերուդ գլուխն հակած՝
Համբ իր լացովն եւ մունչ լուռով քեզ խօսելու,

Եւ անդարման որբութիւնդ քիչ մ'սփոփելու . . .

Ներկայութեանդ ըուրջ մտերմիկ — ինզ սիրող
Եւ բարեկամ հոգիներու ուխտավայր —
Ես՝ ամչկոս եւ կոյսի պէս սիրադող
Բարեկամի մը ըուժն էի աննեմար...

Եւ արեւիդ ըուրջ պտուտքող ամենեն
Ես հեռաւոր ու բենիամին ասողն էի.
Որ բու ծափեն եւ նայուածին եւ լոյսեն
Շնորհեիր դուն մեծ բաժին մը ինձի:

Ուստի ոչի՞նչ կտակեցիր դուն ինձի
Ափ մ'ինչերեկդ՝ ոսկիի պէս քանի ու պերն
Եւ նայուածիդ ու ձայնիդ չափ սիրելի,
Որ իբր մասունք ես պահեի արկղիս մեզ:

Բայց չգիտցա՛ր, երկրին վրայ մարդ չգիտցա՛ւ,
Որ ինձ յանձնած էիր ինզի հակառակ՝
Թողօններեկդ աւելի՛ սուղ եւ անբաւ
Քու յիշատակդ՝ որպէս կեանեկդ հրիտակ.

Սուրբ յիշատակն անձիդ, ձայնիդ, աշենուդ՝
Որ արդ քայլերս եւ օրս երբե՛ք չեն լիեր,
Եւ յիշատակն, եւ յիշատակը հոգւոյդ՝
Որ արդ միա՛կ հարսութիւնս է անմեռ...

Ներկայութեանդ ոռւրջ մտերմիկ— ինզ սիրող
Եւ բարեկամ հոգիներու ուխտավայր—
Ես՝ ամչկոս եւ կոյսի պէս սիրադող
Բարեկամի մը ոռւրին էի աննեմար...

Եւ արեւիդ ոռւրջ պտուտքող ամենէն
Ես հեռաւոր ու բենիամին ասողն էի.
Որ բու ժպտեն եւ նայուածքեն եւ լոյսեն
Ննորհեիր դուն մեծ բաժին մը ինձի:

Ուստի ոչի՞նչ կտակեցիր դուն ինձի
Ափ մ'ինչերեկդ՝ ոսկիի պէս քանի ու պերճ
Եւ նայուածքիդ ու ձայնիդ չափ սիրելի,
Որ իբր մասունք ես պահեի արկղիս մեզ:

Բայց չգիտցա՛ր, երկրին վրայ մարդ չգիտցա՛ւ,
Որ ինձ յանձնած էիր ինզի հակառակ՝
Թողօններեկդ աւելի՛ սուղ եւ անբաւ
Քու յիշատակդ՝ որպէս կեանիկդ հրիտակ.

Սուրբ յիշատակն անձիդ, ձայնիդ, աշքերուդ՝
Որ արդ քայլերս եւ օրս երբե՛ք չեն լիեր,
Եւ յիշատակն, եւ յիշատակը հոգւոյդ՝
Որ արդ միա՛կ հարսութիւնս է անմեռ...

Դուն ուզեցիր մինա'կ երբալ տունդ յետին՝
Մահուանդ ետեւ առանց մարդու ստուերի,
Եւ հոն նիրել հողէ մահնիդ մէջ այրի՝
Վրադ առանց ծաղկի, խունկի, խօսքի սին:

Բայց մեռեալի կամքովդ իսկ սուրբ եւ զօրեղ
Զիս արգիլել չեի՛ր կրնար բնաւին,
Որ անսփոփ սուզի սրինգ մը բերնին՝
Դագաղդ ուսին՝ ֆեղ չուղեցէ՛ր վիշտ այնտեղ.

Որ ետեւէդ սպահառա՛չ չգային
Ցուղարկաւոր ոսնաբայլերս եւ հոգիս,
Եւ արցուներս՝ այդ տան սեմին անմայիս
Չքափէին իրենց վարդերը վերջին.

Որ իմ աշեւրս, հուսկ փափաքիդ հակառակ,
Զիսնկէին բուրվառն իրենց արցունիքի,
Եւ եռուն լուռն իմ օրբերուս չընեի
Սիրոյ բարբառ ու օարական ողբերգակ...

Չեի՛ր կրնար արգիլել վիշտս սակայն,
Եւ իու վրադ չեի՛ կրնար ես չողբալ,
Զի մարդ մ'էիր դուն ա'լ անզոյ եւ անցեալ,
Եւ ես՝ դեռ ողջ մարդ մը, դեռ բարձ ժիրմիդ վրան...

Անդարձ երթիդ տարեդարձին առքիւ կանաչ,

Որ ինձ կ'ոգէ թէ բաժանման տարի մ'առաջ

Երկրի վլրայ հասա՛կ մը դուն կը կանգնեիր.

Անդարձ երթիդ տարեդարձին առքիւ անչեզ,

Որ կը յուսէ ինձ թէ այսօր, փջումեդ վերջ,

Հասակդ փշրած կուժ մ'հ՝ համակ մութ եւ մոխիր,

Ծաղկի փոխան կը փերթատեմ սիրիմդ ի վար՝

Տերեւ տերեւ, ու տող առ տող, ու բառ առ բառ՝

Տաղն այս բաղուա՛ծ սուզիս դալար ուռենիեն...

Եւ խունկի տեղ ես կը ծխեմ իմ արցունեներս՝

Մինչեւ հիմա նոյնքա՛ն զերմին եւ սիրակեզ

Որքան մահուանդ առաջին օրը ամենեն...

Եւ օրերու մեզին ետեւ մոռնալու տեղ՝

Քեզ կը յիօե՛մ, քեզ կը յիօե՛մ միւս աւելի՝

Հրաժեօսիդ յուժին առքիւ այս բախծալի...

Մա՛ն խորամանկ, օրեր ի վեր, բոյնի պէս՝
Ներկա՛յ՝ մարդու մը մարմնին մէջ զաղտնապէս,
Եւ իր խուցին՝ նենգ ոռորդի մը նման .

Ողջերեն ա՛լ ամայացած մենութեա՞ն
Ու աւօսի մը լոռորեա՞ն եւ մութի՞ն
Կ'սպասէիր դարանակալ, անձկագին,

Այդ մարդն անդարձ ախորելու ա՛լ կեանքէն՝
Անդրերկնային դեպի բարձունք մը պայծառ
Կամ ընդերկեայ դեպի բարայր մը խաւար . . .

Մա՛ն, ոռոսած եիր երե անպայման
Այդքա՞ն կանուխ՝ երկրի ափին ծաղ կասուն
Ա՛լ վերցլնել տկար խարիսխն իր հոգւոյն,

Զեկ՞ր կրնար դոյզըն շնորհով մը բարի
Եր հուսկ մեկնման զարնել զանգակը զուծկամ՝
Դեմքի, ձայնի, լոյսի մէջտեղ, որ կեանքի

Վարդ բարափին չհեռանա՛ր ան՝ յուսա՛ս,
Եռորդին՝ երբի չմնա՛ր բառն՝ անաւա՛րտ,
Եւ չմեկնե՛ր՝ աչքը ետի՞ն յաւիտեան . . .

Կեանքրդ ամբողջ դուն ապրեցար որբի հանգոյն՝
Գլուխ գլխի առանձնութեան հետ ցուրտ եւ մուր,
Պանդոկներու մէջ ծիսելով ցայդ եւ ձանձրոյք,
Կամ երգ առ երգ ծախսելով սիրող չորս հովուն:

Դուն չնանշցար զով օռւն երդի մը սեփական՝
Ուր խարսխիւ նաւը կեանքրդ մինչ օրն յետին.
Դուն չտանցար հուրովը տան մը ակուրին,
Զօնչեցի՛ր բոյրը հացին ընտանեկան . . .

Ու քեզ երա՛զ մնաց երդի մը վարդենին,
Մնաց կարօ՛ս կնոջ մ'երկինքը սիրակար,
Եւ անհաս յո՛յս՝ ընորհի զաւկի մը հարազան
Ու նոր գարուն պիտի ըլլար ձմրանդ ցրտին . . .

Ճակատագիր մը ձառ կարծես հալածեր քեզ
Եւ անիծած ըլլար մինչեւ բոպեդ վերջին,
Այդքա՛ն զրկանք ալ չբաւեր քեզ տակաւին՝
Կեանքրդ ամբողջ ապրելէ վերջ որբի մը պէս՝

Մեռա՛ր նաեւ որբի մը պէս մենութեան մէջ . . .

Դուն որ քու կեանեդ՝ այգեն իր ցայզն յետնագոյն՝
Ըրիր ընծայ լազգիդ քուրմի մը հանգոյն,
Եւ աննահանջ զինուռն եղար Հայ Գիրին.
Որուն տուիր մտիդ մինչ սիբը վերջին.

Դուն որ գրիչ ըրիր հովուի գաւազան,
Դարերու լեռն ի վեր Յեղիդ բարձրացման.
Եւ տաղանդիդ ձերն այրելով հատցուցիր.
Անոր համբուն լուսաւորման ի խնդիր.

Դուն որ ամբողջ կեանեդ հայ լեզուն երգեցիր,
Սփոփելու հայ հոգիներ տրմալիր,
Օ՛, բա՛յս դաժան, հուսկ ռոպէիդ՝ գէք հայ բառ.
Մը լսելու սփոփն իսկ զով չունեցար...

Ու որբ խուցի պանդխտուրեան մէջ դժխեմ.
Գտար լոկ տար դէմք մ'առկայծ հայ սրտիդ դէմ.
Ու խորբ եւ ցուրտ ձե՛ռք մը եղաւ որ փակեց
Հայու հոգիդ եւ մէկ-հատիկդ մրայեղց...

Հարուս սրտով , բամբ խօսեով եւ արգաւանդ մշածմամբ
Ուրիշ դարէ մ'կիր դուն՝ հասա՛ծ այս նոր օրերուն ,
Դարէ՛ մը զոր կառուցին մեր հին հայրերն ապստամբ՝
Երենց գրչով ու զենքով ու հանճարով իմաստուն :

Հայրենիքի՛ ալ փոխուած ուրիշ երկրէ մ'կիր դուն ,
Տարախւած՝ ակամայ՝ այս ափերուն վրայ խորք ,
Երկրէ՛ մը զոր կերտեցին նիզերը մեր հայրերուն ,
Եւ ոռոգեց , ծաղ կեցուց արիւնն անոնց կենսայորդ . . .

Կը կարդայիր երբ յուշիդ գիրքն հին՝ այլ քարմ ու խոռով ,
Անկէ կարծես կը յառներ՝ առասպելի մը նման՝
Այդ դարն անցեալ , իր կեանքով , իր մարդերով , բարերով ,
Կամ այդ աօխարհն՝ իր գոյնով եւ բուրումով դիւրական :

Եւ երբ այս նոր օրերուն մէջն , հոդին վրայ նոր ,
Դուն՝ մեր հին դա՛րը ինքնին , դուն՝ մեր երկի՛րը անցեալ ,
Ասոն փառքիդ տակ կֆած կը քալէիր ալեւոր ,
Կը կարծէի՛ ես տեսնել այն պերն տեսիլն հոգեզմայլ

Որ պատկանիլ ալ կրնար մեր առօրեայ կեանքն ի վար
Քեզ պէս նամբէն մեր քալող՝ փառապսակ , ձիւնամեայ
Վարուժանի՛ մը դեռ ողջ , Մեծարենցի՛ մը դեռ վառ ,
Որոնց դարէն ու երկրէն եիր եկած ակամայ՝

Մինչեւ օրերն այս մեր մուք , մինչեւ ափերն այս մեր տար . . .

Լ գ .

Քեզ, ու զի՞ս ալ քեզի նետ, մահացուցած մահեղ վերց
Միակ սփոփս երջանիկ՝ անբալասան ցաւիս մէջ՝
Այն է որ քեզ հասկցա՛յ իբր ի՛մ իսկ խոհս ընտանի,
Եւ իբրեւ սիրս հարազա՞ քեզ լիութեամբ զգացի՛.

Որ կուրծքիս տակ լսեցի քո՛ւ իսկ քախիծդ, եւ հոգիդ
Ծերունիի՛ որ կանաչ զաւկի մը տենչն ուներ խիս,
Եւ դրանիկի՛ որուն տո՛ւն մը չբացաւ իր հոգին,
Եւ հիւանդի՛ որ զգաց վերջն իր յոյսին ու տունչին...

Եւ քեզ ծածո՛ւկ սիրեցի, ես՝ սիկնահա՛ր տարփածու,
Քե՛զ՝ որ որբուկ կեանեղ ի բուն չըմբռնուած ըլլալու
Տառապանեն այրուած՝ զայն պոռացի՛ր ծովէ ծով,
Յոյսովը գէր լսուելու, եւ սիրուելու կարօսով...

Մարդոց դիմաց եւ լոյսին՝ սիրերդ բացի՛ր զիրք առ զիրք,
Տաղերու մէջ՝ հոգւոյդ պէս եւ զուրի պէս՝ բափանցիկ,
Որ անոնց տակ ամեն աչք, ամեն հոգի զայն դիւրա՛ւ
Զգար, տեսներ եւ կարդար. բայց չկարդա՞ց, չտեսա՛ւ...

Այժմ սփոփս է երջանիկ՝ որ կեանեիդ հուսկ րոպէին,
Մահեղ րոպէ մը առաջ կուահեցի՛ր հոգեւին,
Ո՛վ բարեկամ, եւ գիւցա՛ր՝ իբր էջի մը մէջեն բաց,
Որ հասկցա՛ծ եմ ես քեզ, եւ զաւկի պէս զգացա՛ծ

Յայտնածներուդ հետ վճիս՝ ծածկածնե՛րդ ալ անբափանց...

Երբ երակներդ կը լնուր դեռ կեսանքի ուժն յաղթ ու վես՝
Մահեն երկիւղ չունեկ՛ր, կը կանչեփ՛ր զայն կրկես՝
Հաւատալով թէ դիմացն հզօր ջահին բու մտքիդ՝
Գաղտնիք չունեկ իր ճամբան եւ լոյսի պէս եր վնիս... .

Սակայն գտար երբ գուն բեզ իր ցայգուն դեմ նենզալի՝
Խնչպէս զինուոր մը անզեն նահանջե՛ց լոյսդ երբեմնի.
Ճանչցա՛ր անզօր կուրուրիւնդ. եւ մեռնելու վախ մը մեծ
Թայնժամ մարմինդ եւ հոգիդ բունեղ օդի պէս պատեց:

Եւ սարսափեդ՝ մտապիծ գուն արքնուրեամբ զինալի՛ր.
Ունինդի՛ր մեն մի ժայլի որ կրեար բօրն ըլլալ իր,
Զեխի՛ր փակիեր գուն աշխերդ, որ ան յանկարծ մի գուցէ
Քունիդ ճամբեն խորամանկ բեզ չմօտի՛, չխեղդի՛...

Բայց ան, հեգնող եւ յանդուգն, այգուն ոռղին հիս անեղծ,
Եկաւ, գտաւ, բեզ զարկաւ պոնդով մը մեղմ որ բաւե՛ց
Զգեսնելու խոտի պէս նիշդ այն պահո՛ւն ապահով՝
Արքո՛ւն էիր երբ մտքով ու աշխերով ու սրտով,

Եւ ռազմիկի պէս պատրա՞ս մահառելու դեմն անոր...
Ամբողջ կոխւգ այլ եղաւ լո՛կ օգնակոչ մը անզօր
Եւ զուր շարժում մը ձեռքի անոր խոցին դեմ անզուր.
Եւ լոյս գլուխոդ՝ ծաղկի պէս յաւես փլա՛ւ անոր մուր,

Անօր անդունդ գրկին մեջ, մինչ այգն հեռուն կը զարքնուր...

Երկու տղաք կը բալեն
Այսօր այն հին նամբային
Ուր, ե՛ր-երբեմն, դեռ երեկ
Կարծես՝ անոնք միշտ երեք
Էին — երեք հասակներ...
Անոնք՝ երեք սիրբնկեր
Որոնց երեցն եիր դուն
— Ո՞վ բացակայ անդրագոյն —
Զմեռներովդ խոնջ ու ծեր,
Խմասութեամբդ ալեհիներ,
Եւ նոգիովըդ դալար...

Սիրոյ նամբուն վլըրայ պերն,
Երեկ՝ երեք, որոնց մէջ
Հայր մ'ըլլայիր դուն կարծես.
Օ՛, հա՛յր եիր իսկապէս՝
Պննուած զոյզ զաւակի
Մը ընորհով եզակի.
Անոնք՝ հարուստ միշտ ժեզմով,
Եւ անոնցմով՝ դուն զինով...

Բայց երեկուան նոյն նամբեն
Արդ նողմակար կը բալեն,
Արդ տրտաբեկ կ'ընքանան
Երկու տղաք միմիայն՝
Երեցն հօրմէ կարծես որբ,
Կամ ա՛լ առանց մեծ եղբօր...

Իրիկուան մէջ, հին նամբէն
Երկու տղաք կը քալեն.
Իբրեւ ոռւժի մը մասին՝
Երկու տղաք կը խօսին
Իրենց յուշին մէջէն վառ,
Հառաջ հառաչ, բառ առ բառ
Ոգելով մարդն այն փայլուն
Որ գարնան օր մ'եղար դո՛ւն՝
Երկրին վըրայ, իրենց քով,
Իրենց նման՝ տրոփով
Ու ողջութեամբ ակաղձուն,
Ո՛վ մեծ եղբայր քաղցրանուն:

Եւ յուշերու նամբային՝
Երկու որբեր կը խօսին
Արտասուածա՛յն, խնկօրէն . . .
Մտիկ կ'ընե՞ս երկնեֆէն
Անոնց խօսերն ու հոգին,
Ինչպէս երեկ՝ տակաւին
Երկրէն եիր երբ դո՛ւն ալ,
Անոնց կողքին՝ նամաքայլ
Իբրեւ եղբայր մը երկց,
Կամ հայր մ'երկու զաւկի մէջ:

Արգ կը լսե՞ս կապոյտէն . . .
Երկրին վըրայ քե՞զ կ'ոգեն
Բարեկամներդ այն երկու
Որ ուղեկից եղան քու
Ա՛լ կարն նամբուդ հուսկ մասին՝
Մինչեւ գիտերը վերջին . . .

Եւ կը տեսնէ՞ քու հոգին
Պատօգամէն երկնելին
Անոնց ատու հասակներն՝
Ամառներով ծանրաբեռն,
Ինչպէս երեկ՝ երբ աչքերդ
Ունեին լոյս կենսաւէս...
Եւ բարձրերէն երկնելին՝
Կ'զգա՞յ, կ'զգա՞յ քու հոգին
Անոնց արտերն՝ ա՛լ խոռով,
Եւ լի՞ սուզիդ սեւ ամպով...

Եւ բաղրայուս ուղինեն՝
Երկու տղաֆ տրտմալար,
Յիշատակիդ ուրեջ՝ եղբա՛յր,
Վետէդ ճնած մէ՛կ զաւակ,
Կը բալեն զոյգ մը տղաֆ
Այն հին նամբէն՝ ուր երեկ
Քեզմով էին միւս երեք,
Մրտի երեք ընկերներ,
Այժմ հանդերձեալ ո՛վ ընկեր...

Քու անցեալին նամբուն վրան
Երկու տղաֆ արդ միայն,
Յուղարկաւո՛ր միւս յուշիդ,
Դագաղակիր դեռ սուզիդ...
Երկու տղաֆ, որ խոռով
Երենց խոհով ու սերով
Ուղեկից են մինչ այսօր
Ճամբորդութեանդ անդրաւոր...
Իրենց հոգւոյն նարդ եւ խունկ,

Աւ հառաջանք եւ արցութք՝
իրենց խօսքին, աչերուն,
Երկու տղան անանուն,
Ուր սրբուն կը խօսին
Կորսուած հօր մը մասին,
Կամ մեծ եղբօր մ'աննման,
Եւ յուշիդ վրայ՝ սփսոսման
Վարդ ու ողբեր կը փետեն
Իրենց սրտեն, օրբներեն...

Պահ մը, ճամբուն վրայ մեկեն
Տղան երկու կը լռեն
Գիշերուան մէջ՝ որ իջեր
Է առլզիդ պէս, հին ընկեր,
Իրենց սրտին վրայ քախծոն.
Զի կը կարծեն իրենց մօս
Լսել ոտիկ ձայնը տաք՝
Իրենց քայլին ներդաշնակ,
Զգալ հոգւոյդ եւ սիրոյդ
Հպումն իրենց հոգւոյն մուր,
Եւ կը հաւտան այն ատեն՝
Ուր դուն իրենց հետ նորեն,
Իրենց միջեւ՝ հօր մը պէս՝
Կեանին մէջէն կը քալիս...

Այսօր, կրկին, հին ճամբեն,
Խնչպէս երեկ, ո՛վ մարդեր,
Երեք տղան կը քալեն —
Կարծեք երեք սիրընկեր...

Երմէկ'կ դեռ սիրորդ ըլլար տրոփներով ալեկո՛ծ՝

Արիւնին պէս որ հիմա կը հեղեղէ երակներս .

Եւ դեռ արքուն՝ զոց աչերդ — զերդ արեւուն աչքը բոց,

Որ տեսնեի՛ր օրէ օր իմ բողբոջիլս հասկապէս...

Եւ սառ ձեռներդ՝ դեռ ո՛ղջ, որ անոնցմով հայրօտեն

Դուն կապէիր հարսնութեան պատկը նակտիս եւ նակտին

Այն աղջկամ՝ զոր ներկայ եւ ապագայ կոյսերեն,

Երկրի բոլոր վարդերեն եւ աստղերեն երկնային

Դուն փնտուեցի՛ր, ընտրեցի՛ր ինծի համար՝ իմ կեանքին

Ուղեկցուի մը որպէս, իբր հարազա՛ս հու որդուոյն...

Եւ տեսնելով միացումն անոնց սիրող սրտերուն

Ու բարձրացումն անոնց տան՝ հենուեի՛ր ինչպէս հայր .

Եւ լոյսին տակ ու շուրջին անոնց սիրոյն վիպային՝

Նրազեի՛ր բուխ մանուկ մ'որ պիտի բոռքդ ըլլար,

Դո՛ւն, որ մեռա՛ր կարօտվն երջանկութեան հայրական...

Ո՞չ, չմեռար դուն, ո՞վ մարդ, այնպէս ինչպէս կը մեռնին
Խրենց ցայդուն բնական եւ հուսկ ժամուն ալեւոր՝
Ծառերու ծեր եւ հիւծած բոյրն ու կանաչն ու ռոկին՝
Կը պատաճէք երբ զանոնք ձիւնին ողարօն երկնաւոր...

Բայց ձմեռէդ իսկ առաջ — որ վա՛ղ եր դեռ ու հեռի՛ —
Դուն կանխահաս մահացա՞ սպանենուա՛ նենգորէն,
Ինչպէս եղնիկն ուսորդէն իր զարևան մեջ կը խոցուի,
Եւ դեռ օբեղ վարդ մ'ինչպէս կ'արմախլուի անցորդէն:

Տարիներուդ հակառակ քու պտղաբերձ եւ բերրի՛.
Դեռ կրնա՛ր ծառը կեանիիդ տեւել, պտղիլ երկրին վրան,
Եւ բռներուդ ապազայ թլալ անուս հովանի,
Անոնց սրտին եւ մտին զամբել անուրջ եւ ոռւսան...

Դեռ կրնա՛ր ծառն օրերուդ, թէեւ առուն եր վրան...
Թէեւ առուն վրադ քառած, սիւտրդ գարուն եր յուռի...
Սակայն մարդերն որ չեղա՛ն տեղի եղբայր զզացման՝
Խրենց խօսին մաղձերով, եղբայրութեամբ թօնամի,

Եւ կեղծիմին ժամտ քոյնով՝ հոգեսպանի՛շրդ դարձան...

ՇԻՐԻՄԻ ՄԸ ՎՐԱՅ

ԼԵ.

Այս էջերուն ուղիկն մարդ մը կ'անցնի՝
Ա'լ զգեցած անմատ հանդերձ մը յուշի.

Մա'րդն այն տեղ որ երեւցաւ օր մը լոյս՝
Ճամբռ'ւն կեանքիս, երակներուս, խոներուս,

Եւ հեռացաւ այս երկեն ցայդ մը գումկան՝
Կանգնելէ եսք դէմքս հասակ մը իշխան,
Զոր բանդակել գրիչս անփորձ չի' կրնար,
Բայց որուն հոս գծեց լոկ ուրէք պայծառ...

Ասուպի պէս՝ մարդ մը եկաւ ու գնաց...
Բայց անցքն իր կարեն բացաւ ետին բալլերուն՝
Մը ամբուն մէջ խոր ակոս մ'ուր իսկոյն

Թիշատակի իր հունտերէն սերմանած՝
Միրոյ, վօսի եւ արցունի ծաղկեցան
Վարդեր՝ որ հոս դարձան ենթուած եւ մատեան...

Լթ.

Այժմ հողին տակ ալ կը պառկի՞ս՝ հանգիս լինի ջուրին պէս,
Ու տիւանդոր մ'ինչպէս անշարժ եւ անշուկ՝ խաղաղ ես,
Ու մանուկի նինջի նման անրջածուփ կը հանգչիս:

Քարի պէս մունջ, ցայգուն պէս մուք՝ անյայս երկրէ մ'այլեւս ներս
Դուն աօխարհիկ խինդ ու ցաւի ա'լ անզզայ կը նիրհե՛ս,
Եւ անտարբեր՝ ամեն ձայնի, ամեն խօսքի եւ լոյսի:

Մտածումի եւ նայուածքի սահմաններէն դուրս նիմա,
Փամանակին ու միջոցէն ու ձեւերէն խաբեբայ
Եւ արեւի ու մարդերու ծագերէն դուրս կ'անրջե՛ս...

Կ'անրջես տեղ մ'ուր կ'սկսի կապոյս սահմանն անսահման՝
Սուրբ երազին անդենական եւ երկնի բաղցրուրեան,
Ուր նորիզոնը կը բացուի լուսաբացի մը անվերջ...

Կեանի փշուտ անապատէն ա'լ խոնջահար դուն նահբորդ,
Տարեալին անդուրուրեամբ մը կը հանգչիս անհաղորդ՝
Յաւերժուրեան ովասիսին որ Աստուծոյ ուրէն է զով...

Տեղ մը նիմա, զոց օփրմիդ մէջ կամ անկէ դուրս տե՛ղ մ'անհաս,
Անմատչելի զագարներու մօտադալար ձիւներուն
Մտնջենի եւ իտեալ խաղաղուրիւնն ես համբուն...

Ո՞վ ողբացեալ, օիրմիդ առջեւ ես ըլլայի
Եղերամայր մը որ զիտէ՛ իմասնօրէն
Տխուր արուեստն արտասուբի.

Եղերամայր մ'որ զիտնայի, կարենայի
Մեռնելու չափ կուրծքս կոճել, փետել մազերս,
Մանուանդ վրայ անզարելի...

Որ վասաբուխ օփր մը աշխերս աղբիւրէին
Շռալօրէն հողիդ վրայ իրենց տրում
Վարդերն ու նարդն ու ծո՛վ հոգին...

Որ տաւղէին իմ երբունիներն հոգւոյդ վրան
Անմանական հառաջերգներ եւ հձիւններ՝
Իբրեւ օրօր ու տարական...

Որ իմ ձեռքերն յիշատակիդ վրայ խոնարհ
Տարափէին ուռենիներ եւ դափնիներ՝
Զայն պահելու բարմ ու դալար...

Այդ ամենուն փոխան, աւա՛ղ, լոկ բա՛ռ եւ խօ՛ս՝
Զոր կ'առուակէ անօռնչ, անյոյզ այս բուղըն ի վար
Տրմակարկազ գրիչ մը սոսկ...

ԽԱ .

Կեանիդ ապրեցար դուն զաղտնօրէն, դուն խորութկէն,

Կայծ մը ինչպէս մոխրի տակ.

Մարդոց անհաս հանքի հանգոյն՝ ան մօսօրէն

Մնաց խորհուրդ եւ գաղտնիք:

Թէեւ եղար միւս մարդոց մէջ, բայց առանձին

Դուն ընթացար կեանին ի լար.

Ու բացուեցան թէեւ ըրբներդ, բայց քու հոգին՝

Երկնիդի պէս մնաց զոյ...

Եւ տաղերուդ մէջ՝ նրգենիդ ներքին անձիր՝

Միայն կայծեր տուիր ցոյց.

Մարդոց աշխին հազի՛ւ փայլեր ընդյայտնեցիր

Աղամանիդին քու ներքին:

Եւ որպէսզի ձակատագիրը պսակուեր

Հոգւո՛յդ վայել դափնիով,

Մեռար այնպէ՛ս քերքող մ'ինչպէս պէտք է մեռներ —

Համակ խորհուրդ եւ գաղտնիք...

Եիրմաստանի ամայութեան եւ լոռութեան
Մէջ, ուր քարեր եւ մեռեալներ կը քնանան
Աճլուսընկայ ցայգանինզով մ'անձագելի՝
Վերմակին տակ մոռացումի եւ մուր մոխրի.
Եիրմաստանի մեռելութեան մէջ՝ ուր միայն
Խաչափայքեր խեղճ ողջութիւն մը ցոյց կու տան,
Ես՝ իմ առողջ, իմ երկնաձիգ, իմ տրոփուն
Հասակն ահա՛ կը կարկառեմ սիւնի հանգոյն՝
Մեռելներու եւ քարերու բունին վրան
Ուր կը ծորի տարածութիւն մը անվախնան,
Եւ երկրաւոր ձայնը ողջի կը տեփորեմ
Մեռելներու խուլ ականջին եւ օդրմիդ դեմ.
Եւ կը կանչեմ, ու կ'արտառուեմ ես բառ առ բառ
Անունդ՝ Վահան օ՛ Թէմէեան, անո՞ւ իմ հայր,
Իմ մե՛ծ եղբայր, իմ բարեկամ... Եւ օդրմիդ բով
Ես կ'սպասեմ՝ մանկան մը պէս հաւատալով
Ու գագաղիդ գուներն յանկարծ բանաս պիտի
Եւ գաս ինծի՛ բարեկամի ու զաւակի
Իմ լայնալին բազուկներուն ու գորովին.
Եւ կը յուսա՛մ հոգեսեւեռ ու վերստին
Պիտի բայլերդ հնչեն կետնին մայրին վրան...
— Զիս կը լսե՞ս... դեռ կը լսե՞ս, ո՞վ Թէմէեան...
Ես կ'սպասեմ պատասխանիդ հացին հետին

Որ պիտի քաղցն յագեցներ իմ հարցումին...
Կ'երգեմ անունդ նոգեհատոր որ՝ ամիսներ՝
Նուրբիս եղաւ հա՛մ մը սիրոյ...։ Զիս չե՞ս լսեր —
Քե՛զ կը կանչեմ. բայց պատասխա՞ն... բայց պատասխա՞ն...։
Շիրմաստանի ամայուքեան եւ լռուքեան
Միշ մարմարնե՛ր ու մեռեալնե՛ր լոկ կը նիրհեն,
Եւ մա՛նը լոկ՝ անպատասխան յաւերծօրեն...։

Օ՛, ի՛նչ հրատէ կենդանուքեան սակայն յանկարծ՝
Շիրմաստան մէջ...։ Սիւէ մը զարնան կարծես եկած
Հեռութերեն անդրաշխարհիկ՝ ուր կ'ապրիս դուն,
Զայն կը լնու իբրեւ նոգիդ եւ ուռչդ անհուն.
Եւ բռչուններ կը դաշնակեն ու կը կարդան
Հոն էջ առ էջ ծաղկած ծառերը տաղարան.
Որ տռփովն ու տաղերովն են գրչիդ լի...։
Անոնց մէջէն բե՛զ կը գտնեմ, եւ կը բուի
Որ պատասխան կու տաս կանչին իմ սիրերգակ.
Մինչդեռ սրտի մէջ յիշատա՛կ առ յիշատա՛կ
Արցունեներէս, աղօրքներէս ու սեւ սուզէս
Ամբողջ կեանիովդ անմահօրեն դուն կը յառնես,

Ո՛վ Թիկէեան — իմ մե՛ծ եղբայր, իմ բարեկա՛մ...։

Թէեւ դարեւ այժմ իրարմէ մեզ կը բաժնեն,
 Բայց չեմ հաւտար որ դուն մեռած ես վերջնօրէն...
 — Մանն ա'լ ի սպառ դադարումն է երկրին վրայ,
 Եւ խոներէն ու նամբային մեր առօրեայ
 Ախորական բացակայումն յանկարծանաս
 Այն մշտակայ սովորոյրին որ կեանքն է այս...
 Մինչ երեկուան ներփայուրեամբրդ՝ տակաւին
 Դուն ողջ մարդու նո՛յն սովորոյրն ես ու նոզին՝
 Սրբս համար ու օրերուս ու աշերուս,
 Եւ իմ ուղին կենդանուրեամբրդ կը լնուս
 Դեռ ամէն օր, ամէն վայրկեան, ողջի նման...
 Հին բարեկամ, օ' ամէն օր, ամէն վայրկեան,
 Ականջներուս կը հնչէ ձայնդ մշտաձագանգ,
 Եւ աշերուս դէմ է հասակրդ գեղականգ,
 Եւ դեմքրդ դեռ կը նանանչէ յութիս մէջէն.
 Քու երբեմնի խօսքերդ մտիս մէջ կը պահէն
 Մշտալար ծաղկի բարմոյր եւ բո՛յր յութի,
 Եւ քու անունն իմ օրբներուն համար ունի
 Հանապազորդ մտերմուրիւնն իր խաղցրահամ,
 Ամէն վայրկեան ամէն տեղ ո'ղջ բարեկամ...
 Թէեւ օփրմի մը կապանեին արդ գերի՛ն ես,
 Այլ կը տարմի՛ս, այլ կը խօսի՛ս, այլ կը տնչե՛ս
 Սիրոյ համար որ ապրելուդ չունի՛ կասկած,
 Ո՛չ մէկ աղէս իբրև չըլլար կեանդ ընդհատած
 Երկրին վրայ՝ ուր իմ նոզւոյն եւ աշերուն
 Սավորուրին մ'եիր անուս, լոյսի հանգոյն...
 Հին բարեկամ, նոյն սովորոյրն ես եւ այսօ՛ր
 Որուն ուրախ կը հանդիպիմ ես ամէն օր
 Իմ յութերուն, իմ նոզին նամբուն վրայ,
 Ինչպէս երեկ՝ անցորդ մ'եիր երբ առօրեայ...

Գաղտնիքի պէս թէեւ ինձմէ ես հեռի,
Հիմա մահուան դուն ա'լ նամբորդ անկայան,
Թէեւ հեռի՝ բիւր գարերով եւ քանի
Մը գոխւ հողի տարածութեամբն անսահման.

Թէեւ վըրան դուն սարերուն անդրագոյն՝
Ուր չի՛ հասնիր խօլ սաւառնակն աշխերուս,
Կամ տակն երկրի ամենախոր վիմերուն՝
Ուր չի՛ հասնիր մժիխ սուզակն ունցասոյզ.

Թէեւ անդի՛ն ես հպումէս եւ կանչէս,
Եւ յոյսերուս հորիզոնն ալ անդին,
Ու մեր միջեւ՝ մօռւեի պէս, մուրի պէս,
Խիս հօղն իջած է ալ մահուան խորհուրդին.

Յաւերժօրէն թէեւ հեռու կը քուիս՝
Բայց իեզ կ'զգամ կեանքին չափ մօսն իմ սրտին,
Զի քաղցր անունդ ունիմ վըրան ըրբունիս,
Եւ ձեռքիս տակ՝ տաղերը ողջ — քու հոգի՛ն...

Պիտի անծիր ժամանակի երկնելն
Երամ երամ դարեր անցնին մոռացման
Քաղաքներու եւ փառքերու վըրայ էն,
Երենց եսին՝ մօռւ եւ ձիւն եւ շլան...

Պիտի բանան գարուններն աչք եւ օրրան,
Մինչ ձմեռներ ոռւրը եւ դազաղ միւս կնեն.
Եւ դամբաններ մատին, փերին, մոխրանան,
Եւ կորողուին նոր ոստաններ յաղթօրեն...

Սակայն հոգիդ՝ որ յանգեր և հողին տակ
Կամ ո՞վ զիտէ այլուր — բայց տե՛ղ մ'անպայման,
Ո՞վ բանասեղծ, պիտի մնայ քարմ ու տաք՝

Մօտանորդ գարունին պէս եւ լոյսին,
Այնիւն ատեն որ բնակին երկրին վրան
Արեւ ու սեր, եւ հոգինե՛ր գտնուին

Որ այդ սերով կարդան տաղերդ, եւ քրքուան...

Ափէ ի ափ պտըցուցիր երկրին վրան
Երկար օրեր՝ մերք զարունի, մերք ձմրան,
Հասակ մը ոռղ՝ մութ ոռւքերուն մէջ մարդոց,
Եւ մեծ անուն մը՝ որբներուն վրայ անոնց:

Եւ դաւս մ'ինչպէս ոսկիներովն արեւուն,
Եւ մայր մ'ինչպէս իր որդիով՝ Կեանեն իսկոյն
Հպարտացա՛ւ, հարստացա՛ւ ծովէ ծով
Քու անունով, քու հասակով, քու փառքով...

Բայց Մահն ընդմիւս երբ հալածեց քեզ կեանքէն,
Եւ մերկացուց քեզմէ երկիրն, այն ատեն
Անմահութիւնն՝ անանուն որբ մը ինչպէս

Որ կ'սպասէ որդեգրումի հայրական,
Աւազանին մէջ դագաղիդ՝ քու մահուան
Միւռոնովն ա՛լ մկրտուած՝ վերջապէս

Անո՛ւն մ'առաւ, անո՛ւնն հոգւոյդ՝ Թէքէեան...

ԽԷ ·

Ի՞նչպէս քանի մը ոտնաշափ հող միայն
Անհուններով մեզ իրարմէ կը բաժնեն,
Մե՛նք՝ դեռ երեկ՝ զո՞յզ մը նման, նո՞յն աստղէն:

Ի՞նչպէս, թէեւ հիւլիններովք համայն՝
Հողին ներքեւ դուն կը պառկիս հողին պէս,
Հոն կը պակսի՛ս, հոն ալ չկա՛ս խսկապէս...

Ահ, գերեզմանդ հանելուկ մ'է անբափանց
Զոր չի՛ կրնար միտքը ջահել ու կարդալ,
Եւ ենք հասնիլ անօր նամբէն, ո՞վ մեռեալ...

Բացակայմանդ դէմ, գիտութեամբս հանդերձ չեն՝
Անպատասխան եւ զուր հարցում մ'եմ համբուն,
Ինչպէս մուր կոյր մը՝ լոյսին դէմ.— ո՞ւր ես դուն...

Միայն գիտեմ տգիտօրէն, խեղնօրէն՝
Թէ մեռա՛ծ ես, մինչ ես կ'ապրիմ տակաւին,
Մե՛նք՝ հակներ երեկ նմա՛ն, նո՞յն երկրէն,

Տարբե՛ր՝ այսօր, զոյզ մ'աւեխարհի մէջ անջատ...

ԽԸ .

Այն սահմանեն անդին հուսկ, ուր ա'լ ի սպառ կ'աւարտի
Կեանքին հեքեաբը ոսկի,
Ով ննջեցեալ, անուրզի եւ ասողի մէջ բնանաս...

Եւ սահմանեն անդին մուք, ուր կ'սկսի անսահման
Եւ ցուրտ գիշերը մահուան,
Ով մարդ, լուսեղ եւ խարտեած այգերու մէջ բնանաս:

Եւ սահմանեն անդին լերի, ուր անվախնա՞ն կ'երկարի
Մահուան երկիրն անջրդի,
Ով մարդ, անուս եւ բաւիս ռուօնի վրայ բնանաս...

Եւ սահմանեն անդին սին, ուր կ'ընդլայնի անձանօք
Պարապ մ'անօւնչ եւ անօդ,
Ով մարդ, նարդի եւ վարդի բոյերու մէջ բնանաս...

Եւ սահմանեն անդին չոր, ուր տատակներ կը բուսնին,
Ուր ռուք չկա՛յ նամբորդին,
Հարսանեկան զեփիւռի եւ զովի մէջ բնանաս...

Իսկ սահմանեն ասդին նոյն, ուր կ'սկսի մոռացման
Երկիրն՝ մարդոց երկրին վրան
Եւ սրերուն մէջ մարդոց, ո՞վ ննջեցեալ, անբարտամ

Յութերու մէջ բնանաս յաւիտեանէ՛ յաւիտեան...

Աւխարհի վըրայ, անկիւն մը մինակ,
Խռնարի եւ խաղաղ հողակոյս մը կայ՝
Որուն խաւարին եւ գաղտնիքին տակ
Մարդ մ'անհունօրէն ա'լ կը բնանայ...

Ո՞չ մեկ խաչ՝ վըրան, եւ ո՞չ մեկ անուն՝
Որ կեանքի անցորդ մը հոն կանգ առնէ
Եւ խնկէ աղօրք մը անոր հոգւոյն
Եւ հողը ցօլէ արտօրով վարդէ:

Անոր աներազ հոգւոյն համար ծեր
Միայն բռչուննե՛ր շարական կ'երգեն.
Եւ հրեսակի ձեռքով լոկ սիւէքե՛ր
Վերջին բունն անոր կ'օրեն մայրօրէն...

Միա՛յն լուսընկան հոն՝ երոջ մը նման՝
Կանքեղ կը վառէ լոյսովն իր բարի,
Մինչ արեւն անոր հող սրտին վըրան
Կը հօնէ բուրվառ նարդի եւ վարդի:

Ու որդիասիրտ տղայ մ'անանուն՝
Աւխարհին վըրայ՝ արցո՛ւնք առ արցո՛ւնք
Ցիւելով այդ մարդն, որ հիմա՛ հեռուն՝
Որք մոռացման մէջ կը ննջէ՛ խորունկի,

Կուլայ իր հոգւոյն սուզը մեծագոյն...

Թէեւ հիմա՝ մեկնումեղ վերջ արփամուս՝
Շեն տեսիլքեղ աչերս ամա՛յ մնացին,
Եւ ձեռքերս՝ ո՛րբ՝ հայր սեղմումեն ձեռքերուդ,
Թայց չե՛մ մոռցած քեզ, բարեկա՛մն իմ կեանքին:

Քեզ չե՛մ մոռցած՝ մեր բաժանմա՛ն հակառակ
Ուր ձիւնեցին ամբողջ դարերն յաւերժին
Եւ աշխարհի հողն ու խաւարը համակ՝
Ցաղք հասակիդ եւ քայլերուդ քու ետին...

Գիրի քուղթերն այս արիւնի ու վիշտ՝
Թո՛ղ ապացոյց ըլլան անկեղծ եւ անմեռ
Թէ ամիսնե՛ր, օրե՛ր, ռոպէ առ ռոպէ,
Միտքով, սիրտով ողջ յութիդ հետ եմ ապրեր:

Գիրքն այս յութի՝ սիրոյս վկա՛յ գրաւոր.
Միհչեւ այն օրն՝ ուր պիտի քե՛զ միանամ,
Անձամբ ըսեմ՝ թէ կեանքիս մէջ ո՛չ մէկ օր
Քեզ չե՛մ մոռցեր, քեզ չե՛մ մոռցեր, բարեկա՛մ...

ԾԱ.

Թէեւ երկրին բացակայ դուն քու օռլով եւ ձայնով,
Սակայն ինչպէս դեռ երեկ՝ այսօր ներկա՛յ ու ո՛ղջ ես,
Եւ առօրեայ նամբուն մէջ՝ մարդոց կողքին կը ժալես:

Եւ արդ կարծես կը հնչէ՛ քու ոտնաձայնն երկրաւոր,
Ու կ'երեւի՛ առողջ օռլով՝ ուղիներուն ծաղկայեղց
Զոր գարնան օր մը գրիչդ գիրերու մէջ ակօսեց...

Շունչդ եւ տրոփի երբեմնի այսօր կարծես կը լեռուն
Ողջերուն օդը նորէն, քեււ փօրա՛ծ է յաւես
Մրժիդ զանգակը ցնծուն, եւ համրացա՛ծ ալ երբներդ...

Հիմա, հողին տակ, ո՛վ մարդ անօսարժ, անօւնչ, անօսունջ,
Թէեւ անցեա՛լն ես անդառ՝ եւ հանգուցեալ յաւիտեան,
Բայց — ո՛վ կեանի յազրանակ՝ Մահուան. վրայ յաղթական —

Իբրեւ տապան՝ յուշդ ի վեր կը կորողուի Ապագա՛ն
Զոր կը լուսեն, կը պննեն քո՛ւ իսկ գրչովդ յղկուած
Մարգարիտները մտիդ, եւ քու օռլունչեդ կեանք առած,

Քու արխւնովը ցօլուած բորբ ծաղիկներն նոզիիդ...

Դուն, որ երեկի տակաւին մարդոց միջեւ, երկրին վրայ,
Կեսնէի բոցով բաբախուն շարժում էիր, ձայն եւ ռունչ,
Այժմ հողին տակ կը ննջես՝ անօարժ, անօւնչ, անօւնչ...

Դուն, որ երեկի տակաւին դէմք մըն էիր լուսաւոր,
Գիրեւրու մէջ ծուարած անուն մ'ես այժմ անկենդան,
Եւ զոյգ մը պարզ բառերու հնչաւորում մը միայն:

Արեւուն տակ երեկուան՝ դուն որ հպարտ տէրն էիր
Հասակի մը հասկաթուու, այսօր՝ կորո՞ղ կործանած
Աւա՛ղ, չունի՞ս ցած խոտի դոյզն ստուերն իսկ զետնամած...

Հիմա մարմինդ՝ աւերակ ա՛լ ապարանք մ'է անփառ
Ուր որդերու եռուզեռ եւ խնջոյք կայ ընդերկրեայ,
Ուր աշխարհի եւ կեանքի ունայնութիւնն է արքա՛յ,

Մինչ՝ դեռ երեկի ան տանար մ'եր երկնամերձ, երկնածիր,
Ուր կը վառեր մտի ջահն՝ աշխարհակալ նանանչով,
Ուր կը հնչէր հոգիին զանգը՝ կեանքին միւս զինով...

Դուն, որ երեկի դեռ միայն՝ լոյսով լեցուն կեա՛նքն էիր—
Համակ շարժում, ձայն եւ ռունչ,— մա՛նն ես հիմա՝ հողին տակ,
Անօարժութիւն, լոռութիւն եւ մքութիւն ա՛լ համակ...

ԾԳ.

Կարն նի՛ւք մը՝ այս: Շա՛ս պարզ եւ շա՛ս առօրեայ:
Քանի մը բառ՝ օրաբերքի մը համար,
Բայց որ լեցուց վեսի մատեանն այս երկար:

Նի՛ւք մը տեսում: Երկրի բոլոր մարդոց պէս,
Բայց անոնցմէ՝ խօսեալ, խոնով եւ յոյզով
Տարբեր մարդու մը մահավէ՛պն հոգեխռով.

Մարդո՛ւ մը ծեր, որբ եւ բախծոս, զոր՝ հազի՛ւ
Օր մը նանչցած՝ ես հասկցա՛յ անհաշիւ,
Եւ օրերուս համար ամբողջ սիրեցի՛...

Խեղն նի՛ւք մը՝ այս: Խոտի մը խե՛ղն մահուան պէս...
Օրաբերքի մը մէջ՝ ան չո՞կ տող մը բառ.
— Մարդ մը մեռաւ. եւ ե՛ս՝ ուրիօ մարդ մօսար՝

Կբերեւ որդի սերով լացի՛ իր վըրայ...

ԾԴ .

Ի վերջոյ մարդ մ'էիր դո՛ւն ալ մարդոց պէս բոլանդակ,
Դո՛ւն ալ զերի ակամայ՝ ձգողութեան եւ հողին,
Երկրի բոլոր բաներուն պէս բու աւխա՛րին ալ ներքին
Փոխն ի փոխ ցեխս ու օռւշան, օռւք ու լոյս, սեւ ու ներմակ...

Թէ սիրտը մերը սիրոյ մեղը ըրիր, մերը ալ կուրծիդի տակ
Դիեցուցիր մաղձ եւ հեռ՝ աւելի՝ յորդ եւ ուժզին
Քան բոյնն օձին եւ բոցին... Թէ մերը հասար Կապոյժին,
Մերը գայթեցա՛ր տիղմն ի վար՝ մարդու նման հասարակ...

Բայց բա՛ւ եղաւ որ հոգիդ բանաստեղծի հրեւակ՝
Քու մահին ես երկրաւոր՝ տիք մ'իր լոյսովն երկնառակ
Մրգէ՛ մարդու սեւ կեղսերդ, այրէ՛ ամեն մոլեխինդ,

Լուսէ՛ խաւար անկիւններդ, լուծէ՛ ժանգերդ չարախինդ,
Եւ հագըցնէ՛ մերկ մարմնիդ, հեք անունիդ, սին յուշիդ՝
Անմահնութեան ծիրանին անմաշ եւ սուրբ եւ վնիս...

Թէեւ հեռու դուն քու տիրմով եւ ուլժով,
Սակայն մօս ես յուշովդ ամէն երկվայրկեան,
Անդենակա՞ն բարեկամ, սիրսն իմ սակայն
Լի՛ և քեզմով, քեզմով տխո՞ւր եւ խռո՞վ...

Քառսուն դարու ցաւ կտակեց մահդ իմ քով՝
Թէեւ միայն քառսուն օրեր դեռ անցան.
Ու վիշտ անո՞ւնդ ունի, Վահա՞ն Թէփեան,
Ու սեր անդուլ դեռ քե՞զ կու լայ ծով առ ծով...

Յաւերժօրհն խաղաղամոյն ո՞վ մեռեալ,
Որ չե՛ս զգար ապրելու մեծ ցաւը ա՛լ,
Ի՞նչպէս ես՝ ո՞ղջ մը՝ քեզ չտամ երանի:

Հոլը քեզի բերաւ հանդիս մահասոյզ.
— Բայց իմ հոգւոյս, վետաբնակ իմ հոգւոյս՝
Քունի սփոփ եւ անդորր ո՞վ տայ պիտի...

ԾԶ.

Մահն՝ անողոք արկդակալի մը նման՝
Գանձը մարմնիդ ազահօրէն կը պահէ
Գերեզմանի սնտուկին մէջ, զոր հողէ
Պինդ կղպանեռով մըն է կնքեր բու վրան:

Եւ դարէ դար ածխարհակալ ան իծխան՝
Իր կայսրութեամբն ու կրունկովն ալպաստէ
Անգրօրէն ան առարուր կը կոխէ
Քեզ որ գերին ու որսն ես իր անվախնան...

Եւ ան ուրա՛խ, եւ ան հարո՛ւս է ֆեզմո՛վ
Որ՝ մարդոց մէջ՝ զբչի արքայ մ'էիր վես,
Եւ՝ երկրին վրայ՝ լուսեղ հասակ մ'ակնարով...

Բայց չի՛ գիտեր՝ թէ բռշնային բու հոգին
Դուրսն է բանտէն գերեզմանին ու մարմնին,
Եւ դո՛ւն ես այժմ որ իր վրայ կը տիրես...

ԾԷ.

Ո՞վ մարդ, հարուստ սերմնացան Գաղափարի եւ Գործի,
Մանրդ կորուստ մ' է անբոյժ՝ մարդոց երկրին անջրդի.
Կարուստ՝ գարնան թօնումին նման առուն առ առուն
Եւ բեղմնաւոր անկման պէս հիւքեղ մրգի մը հասուն...

Որբի պէս լա՞լ այդ կորուստն՝ երբ ան բոյրի՛ է հանգոյն,
Երբ ան զեղումն է գետին դեպի անհունը ծովուն,
Երբ փլուզումն է օրուան՝ որմէ վա՛ղը կը կանգնի,
Եւ արեւմարն՝ որ ցայգուն կ'աւետէ ծա՛զն աստղալի...

Եւ ափսոսա՞լ ցորենիատն որ իյնալով հողին մէջ
Կը կորսուի՛ ալ անհետ՝ ի օան բերքի մը անվերջ.
— Ցանքին կորուստն ինչքա՞ն յորդ՝ նոյնքան կ'ըլլայ հունձն առա՞ս...

Մանրդ, ո՞վ մարդ, լո՞կ մարմնի բացակայում մըն է արդ
Որ հոգիի մօսատել ներկայութեան կը փոխուի.
Այսօր վնա՞ս մ'ան թէեւ՝ պէեւն կորուստին պէս հունտի,

Բայց ինչպէս հասկ մը հարուստ՝ բազմարդիւն օա՛ն մ' է վաղուան...

ԾԱ.

Դիրքն այս տեսում՝ վետիս արեամբ քարաւուն,

Զուցի՛ բնաւ հ զարտուրիւնն լնդունայն

Իբր յուշարձան կորողուելու օհրմիդ վրան:

Կամ սին ձայնովն, ու բառերովն իր բորով՝

Թմբկաւոխնդ տարփողելու ծովէ ծով

Կեանքըդ եւ Գործդ ու Խօսդդ եւ Գիրդ եզական:

Եւ կամ փառքէ նակտիդ վրայ մեծանուն,

Ո՞վ բանասեղձ, իբրեւ դափնի դնելու

Անկենդան փունջ մը դալկահար բերբերու...

ԱՅ՝ մահդ ցման լացող հոգւոյս կսկիծին

Անմեռ նշանն է՝ որ սպամ պիտի բեզ

Նոյնի՛սկ անդին անյիշատակ ալ մահես:

Իր բառերուն մեզէն հոսող անընդհատ՝

Ան, աննշան բարեկամի կամ զաւկի

Արցո՞ւնէ մ'է հոծ՝ որ անսպա՛ն կը կարի

Յուշիդ վրայ եւ անունիդ եւ հոգւոյդ...

Ծթ.

Տաղերն այս տաք զոր ժիրմիդ վրայ տերեւ առ տերեւ
Կ'աւենարափեմ եւ կու լամ սրտիս բուփին վետահար,
Հոս, արխւնի տեղ՝ մելան, ծաղկի տեղ՝ բուղը են բեկեւ,
Եւ զգեցած են բեկեւ Արուեստի ձեւ ու շպար,

Բայց դիմակին տակ իրենց՝ իմ հոգիկս են հոգի՛,
Եւ մարմնես՝ մի՛ս ու արփ'ւն, եւ տրոփի՛ւն են սրտս.
Վետիս ծովեն վերբերուած մարզարի՛ս էն արցունի՛,
Եւ տողերուն մէջ իրենց կ'եղերեցքն երակնեւս...

Եւ հաւատա՛, ո՞վ մեռեալ որ խոր երկրեղ կը լսես
Շիրիմդ ի վար տիր առ տիր անձեւաբափայս բառերս,
Եւ հաւատա՛ որ անոնք նոյնքա՛ն անկեղծ ու անեղծ,

Նոյնքա՛ն վնիս են ու զերմ, եւ արուեստի սուտին զերծ՝
Որքան իրաւ արցունիներն որ ես լացի փոսիդ վրան,
Եւ արցունիներն են իսկ այդ՝ հոս եղած հօս, Զեւ ու Զայն...

Սեւ իրիկուն մը վրայ հասաւ յանկարծ գոյժի պէս,
իր խանդին մէջ մսեցուց, խոցեց Մօակն ստղծիչ՝
Որ սերմնացան աշխատանքն իր ակամայ բողուց կէս
Եւ մեկնեցաւ՝ բողլիքա՛ծ արտ ու արօր ու բրիչ...

Այգուն, ալ ետ չղարձա՛ւ...: Այրիացած դաշտն յայնժամ
Դատարկացա՛ւ ալ կարծես ցորեաններեն իր բուրեան,
Եւ աշնացա՛ւ ու մբնեց, թէեւ գարուն եր փարքամ,
Իբրեւ թէ զինք լեցընողն ըլլար Մօակը միայն:

Բայց, ո՛վ հրաւի, բայց ահա՛ պարմաններ նոր եւ դալար՝
Կախարդուած հասկերուն ոսկի տեսէն եւ բոյրէն՝
Ներս կը մտնեն իր հողէն, եւ կ'ունկնդրե՛ն սիրաբար
Քնարերգին երկնամունչ՝ զոր ցորեաններն իր կ'երգեն...

Մինչ ուրիշներ, որ ունին սերմնացանի ձիրք ու ձեռք,
Կը բռնեն բան ու բրիչ, եւ կը հակին թերաւարտ
Ակօսներուն վրայ բերրի ու ցողերուն կիսամերկ՝
Ուր կը փայլին Մօակին դեռ նիզն ու ժիրտը՝ զերդ վարդ,

Եւ կը դառնան նոր մօակ՝ Անոր դաշտն ժառանգորդ...

ԿԱ .

Վիւսըս, Վահան Թէկիեան, վիւսըս անհուն է, անհուն՝
Օդին նման եւ լոյսին, վիւսըս՝ անունց, ծովու պէս.
Եւ մահեգ վերջ, զերդ դագաղ մ'ուր բեռը կայ Իու մարնոյն՝
Ցուղարկաւոր ուսերուս զայն կը կրեմ դառնապէս ...

Վիւսըս ինձնէն ներս եւ դուրս քեզմով աշխարհ մ'է ինքնին:
Զայն կը օնչեմ իբրեւ օդ, եւ իբրեւ հաց կ'ուտեմ զայն.
Ուզես արիւն նարազա՛ ան կը օրջի իմ սրտին,
Եւ ունչիս պէս կ'ուղեկցի ինծի վայրկեան առ վայրկեան:

Աշերըս զոց թէ արբուն՝ զայն կը տեսնեմ ամենուր:
Ամենեն խորն իմ հոգլոյն խարսխած է զերդ կապար:
Ան ջուրիս մէջ է կարծես եւ խոներուս մէջ տիուր:
Օրերուս համն՝ անով դառն, եւ կեանիս լոյսն է խաւար:

Վիւսըս՝ անցեալ ու զալիք միլիառ մարդոց վիւսերուն
Գումարին չա՛փ է՝ միա՛կ մահուանըդ ըուրջ ամբոխուած.
Օ՛, ժամանակին սպառել չի կրնար թիւն իր անհուն,
Ո՛չ ալ Միջոցը լնուլ իր խոր անդունդն անտարած... .

Բայց հակառակ իր փութին եւ իր ժայռեղ մեծութեան,
Իր երկարեայ ծանրութեան եւ տրամութեան անհասնում,
Մատղաւ եւ թոյլ ուսերուս՝ սգազգեսի մի նման՝
Նս զայն սիրո՞վ եւ խինդո՞վ եւ քաղցրութեա՞մբ կ'զգենում ...

Կը զարմանամ թէ ի՞նչպէս արեւն այսօր վերսին
Կրնայ ծագիլ մահուանդ վրայ ու փողփողել տակաւին,
Եւ ժամացոյցն՝ անփոփոխ՝ դեռ բաբախել երկրին վրայ,
Ուրկէ պակա՛ս ես հիմա, անդարձօրէն բացակայ...

Կը զարմանամ թէ կրկին բոյսերն ի՞նչպէս կը ծաղկին
Վաղորդայնին իսկ մահուանդ եւ ոռ'ւրջն իսկ սեւ բու շիրմին.
Ի՞նչպէս զուարք կը բիբեն առուակ եւ հովլ եւ բռչուն,
Ի՞նչպէս բեզ հետ մուրին տակ չբաղուեցաւ կեանքն համբուն:

Կը զարմանամ թէ ի՞նչպէս մարդիկ՝ կեանքին քեւանցիկ
Եւ անձնասոյզ կը դիմեն իրենց օրուան ուուկայիկ,
Երբ դուն՝ եղբայրն անոնց մեկ, համբայ ելած տունեն նոյն՝
Յանկարծ ինկա՛ր մուրին մեջ եւ սիջեցա՛ր կէս համբուն:

Կը զարմանա՛մ մանաւանդ՝ թէ ես կրնա՛մ տակաւին
Շնչել այն օդն որ երեկի դեռ կ'ըմպէկինք միասին
Նո՛յն բաժակեն ոլորտին, բայց զոր այսօր կ'ըմբռտինեմ՝
Դիմալո՛վ իսկ թէ հովլին տակ ոսկրակոյն մ'ես նսեմ...

Կը զարմանամ թէ ի՞նչպէս այս աչերովս հարազա՞
Որ դիդ տեսան, որ շիրմիդ վրայ տեղացին վարդ առ վարդ,
Եւ նարդ առ նարդ խնկեցին, դեռ աշխարհին կը նայիմ՝
Ուր ալ անգո՛յ է մարմնի ներկայութիւնդ մտերիմ.

Եւ օրբներովս որ երեկի լային սգերգրդ աղի՝
Ես կը ժայտիմ կենսալից սա աղջկան որ կ'անցնի.
Նորեն կեանքի վարդերով, ո՞հ, կը փրփրի սի՛րս այն նոյն՝
Որ դեռ բռագէ մը առաջ մոխիրներո՛վ եր լեցուն...

Ո՞վ Մարդ, մեզ Կեանքն աղտոտեց իր ցեխերով ախտաժետ,
Բայց մեզ զտեց ու զատեց Մանն հողեղեն ժանգերեկ՝
Ինչպէս հալոցը ոսկին, եւ դուրս հանեց բռ մարմնիդ
Մուր խեփորին մէջ բաշած հոգւոյդ գոհարը վնիս...

Ո՞վ Մարդ՝ բարի՛ ի ծնէ, զոր Կեանքն՝ արքա՛յ Զարիմի՛
Իր մօրակին տակ փոխսեց անառակի մը յոռի.
Մանը սակայն մեզ ըրաւ երեսակի՛ պէս կրկին,
Եւ զազանէն միսերուդ փրկեց հոգւոյդ աղաւնին...

Ո՞վ Մարդ՝ աղուո՛ր ի ծնէ, մարմինն ու դեմքը որուն
Կեանքը խոցե՛ց, խորոնե՛ց սգեղութեամբն օրերուն.
Բայց երկնաւոր իր լոյսով գեղեցկացո՛ւց Մանը մեզ,
Արեւն ինչպէս՝ ցայգէն ես՝ ծաղիկներուն կու տայ գեղ:

Ո՞վ Մարդ, Կեանքի ժամանակն՝ ինչպէս լամբի բոց մ'աթզուր՝
Դոյուրեանդ իւղն սպառե՛ց, այրե՛ց պատրոյզը մարմնոյդ.
Բայց Մանն եղաւ խնկաման մ'ուր աննիւր խունկի հոգիիդ
Վարդ յիշատա՛կը բուրեց եւ ծաւալեց սիրտ սիրտ...

Ու Կեանքը մեզ բանտարկեց օրերուն մէջ խեղն ու նեղ,
Եւ երազիդ աղաւնին խաչեց երկրին վրայ սգեղ.
Բայց Մանը դեմքդ բացաւ երկինք մը նոր ու ոսկի,
Եւ արձակե՛ց հոգիիդ հորիզոնները գերի...

Ո՞վ Մարդ, մեզ Կեանքը չափեց լոկ վայրիկեանի՛ մը վըրան,
Եւ զգեցուց սին տուքի մը գոյուրիւնը միայն.
Բայց Մանը մանացմամբդ Կեանք մը տուաւ գերազոյն—
Յաւերժութեան պէս՝ անման, եւ Միջոցէն ալ՝ անհուն...

ԿԴ.

Թաճկարծ, կարծես հրաժբով, ցուպի մը տակ մողական,
Մարդերը չար՝ մանեղ եսք՝ դիակիդ դէմ մեղրացան,
Մինչ կենաւայս երբ օքներդ դեռ ձայն եւ ունչ ունեին,
Բեւեռն ըրեւ էին մեզ իրենց հեռին եւ խայրին...

Եւ անունիդ հազցուցին իշխանական թագ ու բառ՝
Անո՞նք որ դեռ ողջ անձիդ զլացան ձորձ մ'իսկ անփառ.
Եւ անարժէք դիակիդ տուին սեղ ու սուլ զին,
Անո՞նք որ պերն բու մտիդ լումայ մ'իսկ խեղն մերժեցին:

Եւ հողրդ դեռ չցամբած ժամանակեն եւ տօրին՝
Շուք մը իբրեւ հողին տակ՝ փուրով մոռցան իսկ արդին
Մարդն որ էի՛ր դուն երէկ — բաքախուն մի՛ս եւ մարմի՛ն,
Հոգին որ բո՛ւկդ էր երէկ — հարստուքի՛ւն մը ինքնին,

Լո՛կ յիշելու բանասեղծն որ՝ իբր անուն սոսկական՝
Ա՛լ բնակիչ կը դասնար մատեաններու անկենդան.
Մինչդեռ գիտնալ չուզեցի՛ն քէ՝ երբ դեռ ունչ էիր վառ՝
Արուեստը սեղ ծիրանի՛ մը լոկ եղաւ մեզ համար

Որով թախիծդ ու վերերդ ու որբուքիւնդ ծածկեցիր.
Թէ եւկնածին բերքողին առաջ մարդու սի՛րս մ'էիր՝
Թրծուած երկրի բաղցրագոյն եւ փափկագոյն կաւերէն.
Եւ քէ, ո՛վ մարդ, մանաւանդ դո՛ւն մարդերէն միւս ամէն

Պէտք ունեիր սփոփի՛ եւ զգուանի՛ եւ սէրի՛...

Այնիւն որ մտքիդ եւ մարմնիդ յաղը հասակով
Կեանիի դաժան պատճեփն վրբա՛ն էիր՝ անվրդով
Պատճանեցի՛ր բերդն եսիդ՝ լուտանեներուն դեմ մարդոց,
Խօսերդ ըրած կուռ վահան, գրիչըդ՝ զե՛նք մը անխոց:

Բայց մանը երբ զինարափ ալ ըրաւ քեզ քու կեանեն
Նւ բողուց անձն՝ անպատճան, մարդոց վոնմակ մ'այն ատեն՝
Դիմակաւոր հոգիով, դիմակիդ ուրց, յուժիդ ուրց,
Շողոմանի եւ խնկման բարեկենդա՛ն սարեց լուրց . . .

Նւ ուրիշներ — տաղղակիչ թռչուններու պի՛ղծ երամ —
Ախորժակով մ'ախտաւոր զայն ըրին կե՛ր բաղցրահամ,
Որով իրենց կիրքն ու հեռն յագեցուցին հոգեւին,
Նւ զոր թիրախ դարձուցին իրենց անգուք կտուցին:

Մինչ ուրիշներ ալ յանկարծ եղան անոր վես պատճան՝
Նրբ իրենցմի՛ մանաւանդ պատճառուեր պէսֆ էր ան.
Դարձան անոր բարեկամ՝ երբ ողջուրեանդ, ոտիդ տակ
Նւ օրերուդ դեմ նետեր էին տատասկ եւ ծռդակ . . .

Նւ ուրիշներ, մակաբոյծ ծաղիկներու նման պերն,
Մին փառքն իրենց կառուցին անոր աղբին վրբայ խեղճ . . .
— Բայն Դործդ, ո՛վ Մարդ, Դործն հոգւոյդ եւ ձեռքներուդ՝ կոխելով
Զանոնք բոլորն առարուր՝ փառքի նամբեն, ծով է ծով.

Ժամանակին բայլերով կ'առաջանա՛յ յաղ բական . . .

ԿԶ.

Ես չե՛մ կրնար հաւատալ որ սիրիմի մը դաման
 Հորիզոնին ետեւ կեանքդ եւ աչքերդ ա՛լ մայր մտան
 Չծագելու համար ալ երբեք, երբեք, օ՛ երբեք
 Այդ մ'ապագայ — հոգ չէ՛ ուռ, բայց նոր կեանի այդ մը տեկ...

Չե՛մ հաւատար թէ արկդի մը խեղն դուռով փայտաշեն
 Կեանը ընդ միւս փակուեցաւ խուցի մը մեջ հողեղեն,
 Թէ դուն, ո՞վ մարդ, որ երեկ փերակ մ'եիր լոյսով լի՝
 Եղար այսօր գայուանոց հողի, որդի եւ մուրի...

Ո՛չ, ապաման էու նամբան չէ՛ այն գովիճ մըին
 Ուր երկրաւոր ամեն բան Տարրալուծման Օրենքին
 Ու արդերու կայսրութեան կը դառնայ հե՛ք հպատակ,
 • Կ'ըլլայ աղբի հաւասար եւ խոզերու ոնբատակ:

Ես չե՛մ կրնար հաւատալ մայրամուտիդ վերջնական.
 — Արեն որ մայր կը մտնէ կարն աչքերուս դիմ միայն՝
 Հորիզոնին ետեւ լայն դեռ կը տրզի՛ լուսաւոր,
 Նորէ՛ն, նորէ՛ն ծագելու յաջորդ այգուն, օր մը նոր...

ԿԵ

Բանասեղծն է որ կ'անցնի կեանքի տգեղ ճամբային...

Կարծես իջած կապոյտեն երկրի հողին վրայ ցած՝

Ան կը քալէ զերդ Ասուած՝ ձայնն երկնահունչ կորսուած

Աղմուկին մէջ օրերու ուր գնչուներ կը գոչեն,

Եւ իր հասակն արքենի՝ խաժամուժին խառնուած

Որուն խոզի ոսքերուն կ'ըլլայ կոխան որպէս վարդ,

Բայց սիրտը պի՛ս Երկնին՝ ուր կը ըողա՛յ անընդհատ

Ասդն իր ոսկի Տեսիլին...։ Շուրջը՝ մարդե՛ր անաստուած,

Որ խո՛ւլ՝ Խօսին ոգեսունչ, իր Երկնառաֆ լոյսին՝ կո՛յր,

Կերուխումի կը վազեն, կամ կ'ըօտապեն սակարան,

Մինչ ուրիշներ՝ որ կիրքի տիղմին խրած կը սողան՝

Հայինուշ եւ քար կը նետեն իր անցնի իվար ծաղկասփիւռ։

Բա՛ւ է սակայն իր դազաղն օր մ'ետք անցնի ա՛լ մահուան

Եփեղ ճամբեն, որ անոնց խաւար եւ կարն աչքերուն՝

Մարգարեկի՝ կամ սուրբի՝ այլափոխուի ինք իսկոյն

Եւ զինք կարծես առջի հե՛ղ միայն տեսնեն ու ճանչնան...։

Յայնժամ, թէեւ ո՛ւս զղջմամբ, պիտի դիմեն իր սիրմին՝

Զայն ընելու սգաւոր իրենց սիրոյն ուխտավայր,

Սուրբի դափնի մը դնեն իր հող ճակտին փօշահար,

Եւ իր անուան հազցընեն փառքի անմաս ծիրանին։

Եւ դամբանի մը անքանդ ու կարկառուն հանդակով
Զինք — թէեւ ո՞ւս վարձ ու փառք — բարձրացնեն եւ զատեն
ՄԵռելներեն հասարակ եւ հողի հարք երեսն
Ուր կտառեց եին զինքն ատելութեամբ մը զինով՝

**Մարգարեկի երբ իր ձայնն երկրին մէջ դեռ կը հնչէր
Եւ իր բարբառն Ասուածի կը սաւառներ անոնց վրան...
— Բայց անզիտսա՛կ դեռ այսօր իր խորհուրդներ գերբական,
Արշառի պէս կ'արտօրան կեանքի փարախն՝ անտարքէր**

Թէ Առաքեա՞լ մը կ'անցնի որուն բայլեն ասմազուն
Կը ծաղկին խունկ եւ օռւան, մինչդեռ խօսին կը քափին
Իմաստութեան ոսկիներ, ու ձայնին՝ երգ եւ լուսին,
Իրենց համբուն մեջ մօրաւ եւ օրուան մեջ աղմկուն...

ԿԸ.

Խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն քող ըլլայ,
Աչխարհասփիւռ ո՛վ մեռեալներ՝ որ օր մ'անցեալ, երկրին վրան,
Կեանքով գինով ողջե՛ր եիք, ներկա՛ն եիք մեզ նման,
Բայց որ մութով ու մոխիրով լեցուն անցեալն էֆ հիմա...

Մագէ ի ծագ, դարէ ի դար խաղաղութի՛ւն քող տեղայ
Կեանքին վրայ ձեր երեկուան եւ հանդերձեալ ձեր կեանքին,
Խաղաղութի՛ւն ոսկորներուն ձեր յոզնաբեկ եւ ցրտին,
Եւ հողմածեծ, արեւախանձ շիրիմներուն ձեր վրայ:

Մինչեւ օրն հուսկ դատաստանին՝ ձեր վրայ ըլլան միտս գարո՛ւն,
Ուռիի ոռ՛ւ եւ արտասո՛ւ, մոռացման պէս լոռութի՛ւն,
Ծփուն հանգի՛ս նաւակայիք եւ ամառուա՛ն լուսընկայ...

Օ՛, դուք ծանօթ եւ անծանօթ աշխարհացա՛ն մեռեալներ,
Անդենական տառապակոծ հոգիներուն համար ձեր՝
Դեռ ողջ մարդու բազկատարած քո՛ղ պաղատանին իմ ըլլայ

Բալասանի խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն ձեր վրայ...

Կթ.

Կ'ողբամ, Վահան' Թէկէեան, մահրդ կ'ողբամ, Բանաստեղծ
Հայրենիքի եւ սրտի, Երգի՛չ կեանի եւ մահուան,
Մահդ՝ որ լուսնի տիջման պէս ետին ձգեց մուք մը մեծ
Եւ ցուրտ մը խոր՝ հոգւոյս մէջ եւ մարդերու երկրին վրայ:

Եւ մահուանդ մէջ՝ մասամբ ուշ ու մասամբ վաղ կ'եղերգեմ
Մահը անցեալ եւ զալիք արուեստի ոռ՛ւրբ մարդերուն,
Լո՛կ որոնցմով այս տգեղ կեանքն ու երկիրն այս նսեմ՝
Երկնիք գեղն ու տնօրին ու ծիրանին կ'ըզգենուն...

Անմահութիւնն սփոփիչ դո՛ւրսն է քեւ տիրիմէն
Եւ պէտք չունի ո՛չ սուգի, ո՛չ արցունիք բոցեղէն,
Բայց չե՛մ կրնար չարիւնիլ եւ չարտասուել մահուան դէմ...

Եւ արցունիքովս անձնական, զոր կ'աղբիւրեմ ժեզ համար,
Ո՛վ բանաստեղծ, հիմակուց կու լամ նաեւ ապագայ
Մահուանս վրայ՝ որ գուցէ լացո՛ղ մը խոկ չունենայ...

Մարդ մը մեռաւ, անուամբ՝ Վահան Թէմէեան:
 Մարդ մը մեռաւ...: Կը մեռնի՝ մարդը սակայն,
 Երկրի լոյսին երբ բացուելով անանուն՝
 Զայն կը բողոք եթին բոյր, լոյս եւ անուն...

Եւ կը մեկնի՝ ո՞վ գիտէ ո՞ր անվախնան
 Անդրածխարհիկ գարնան համար կամ ձմռան,
 Կտակելէ եսք դառն ու մուք մարդերուն՝
 Հոգի՝ մը բաղցր, Գո՞րծ մը բարի, Սի՞ր մ'անհուն.

Քանալէ եսք յուշի ակօս մ'իր ետին՝
 Ուր դարերու տարմերն յաջորդ սնանին
 Պիտի ցանած իր սերմերով կենսաւես:

Մարդ մը մեռաւ...: Կը մեռնի՝ մարդը սակայն,
 Երբ սրտերու եւ գիրքերու մէջ՝ յաւես
 Տպուած անունն իր է՝ Վահան Թէմէեան...



ՏԱՊԱՆԱՔԱՐ

Ճ՛ռ, այս ամիսախատ Բարին առկ— մահուան կրութին երկրակալ՝
Մարդոց վրայ եւ կեսնին,— ի՞ս, ո՞վ մարդեւ կենդանի,
Ծաւերծական գիշերով պատաճուած կը պառկի
Մա՞րդ մը՝ երկիրն ըստ բարձ իր սեւ նիշին հանդերձեալ...

Կը յանգի մա՞րդ մը իսու այժմ— յաւերծօրէն ռէջ կրա'կ,
Խոցինահար' ալ եղէք, եւ ալ մակո'յիկ ծովամոյն,
Ու կը հանգի՛ն ալ իր եւս՝ դիասապաս գիրդ բռչուն՝
Սմէն երազ եւ կարօս, ու խոհ եւ յոյզ եւ փափամ:

Ա՞զ մըն էր ամ զեռ երեկ, ո՞զ մոր մատեան առ մատեան
Քաղցը իր ուրին խուսանին ոկրն իր բաշխեց աօխաւին,
Տուաւ Ազգին ինչ որ ինչըն էր իր միակ— իր հոգի՛ն,
Սւ փոխարէն մարդոցմէն խմորեց յիօսւի՛ն իր միայն...

— Ա՞վ անցուղնիւր, յիշեցէ՛մ այս պայծառ մարդն երեկուայ,
Աւ երկին վրայ՝ անօնախ, իր երդ՝ այս Բարն այժմ ունի,
Նւ լոկ այս վի՛թը մահաւան՛ գիրդ գրկի տեղ կանացի,
Մինչ իր անիւնը զաւկի մը կարօսով կը մխա'յ:

Բռայէ մը զէք կա'նգ առէկ այս վիմակերա յուօին բով,
Եւ լացէ՛մ սիրան՝ որ զողաց ձեզի համար հայրարաւ,
Աւ աղերովն իր բնարին սրեւր ձեր օռմալար
Միօս կը յուզէ Արաւասի մամոււր եւ ան'ւր յուզումով...

Ճ՛ռ, մահակնիք մայսին առկ' ուր կենդանի ամէն բան
Առ կը փօրի՛, կ'աւարօի՛,— ի՞ս ա' բայց անծիր Միջոցին,
մամանակին ընդ մէջէն կը օռովի տակուին
Նւ պիսի միօս օրափէ Սի՛րս մը — Վահան Թէկիեան...

ՀԱՅՈՒՄՐԻ

բարեկարգ նույնական մասնակի առաջնական օրու և այս
անհարց արքական իշխան առաջնական օրու պատճեն
առաջ առ առաջնական յօշտի առաջնական
առաջնական նորու օրու առաջնական օրու ըստ

պատճեն առ պատճեն առ առ առ առ առ առ
պատճեն պատճեն առ առ պատճեն պատճեն
պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն
պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն

Բարեկարգ առ պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն
պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն
պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն

առաջնական պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն
պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն
պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն

պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն
պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն
պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն

պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն
պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն
պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն պատճեն

(In 504)

139646